$$1^3 + 2^3 + 3^3 + \dots + n^3 = \frac{n^2(n+1)^2}{4} : \quad (6)$$

Վերջին նույնությունը կարելի է ապացուցել՝ կիրառելով մաթեմատիկական ինդուկցիայի մեթոդը:

Կարծում ենք, որ դասավանդման ընթացքում նման մոտեցումների կիրառումը էլ ավելի է նպաստում ֆիզիկայի և մաթեմատիկայի նկատմամբ սովորողների հետաքրքրությունների խթանմանն ու գործնական կարողությունների զարգացմանը:

Գրականություն

1. Бутенин Н.В., Лунц Я.Л., Меркин Д.Р. Курс теоретической механики. Том1, М.,Наука, 1979г.
2. Антонов Н.П., Выгодский М.Я., Никитин В.В.,Санкин А.Н. Сборник задач по элементарной математике.М.1960г.

Չողվածը տպագրության է նրաշխարհելի խմբագրական կոլեգիայի անդամ, ֆ.մ.գ.դ. Ա. Գ. Ալեքսանյանը :

ՀՏԴ 911.3 (479.243)

Բնակչության աշխարհագրություն

Անահիտ ԳՐԻԳՈՐՅԱՆ
աշխ. գիտ. թեկ., ԱրՊՀ

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՏ
ԼԵՌՆԱՅԻՆ ԵՐԿՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԱՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԲՆՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդվածում ներկայացված է Արցախի Հանրապետության՝ որպես լեռնային երկրի գյուղական բնակչության և բնակավայրերի տարաբնակեցման բնորոշ գծերը: Լուսաբանվել է գյուղական տարաբնակեցման էությունը և դերը լեռնային երկրների զարգացման գործընթացում: Տրվել են գյուղական տարաբնակեցման առանձնահատկությունները ԱՀ-ում: Հետազոտվել են գյուղական բնակավայրերի ձևաբանական առանձնահատկությունները և աշխարհագրական դիրքը՝ որպես լեռնային երկիր: Բացահայտվել են բնական աճի վրա ազդող գործոնները: Հանրապետության շրջանների համալիրային զարգացումը կնպաստի հանրապետության կայուն հասարակության զարգացմանը:

Բանալի բառեր՝ տարաբնակեցում, դիալեկտիկական, տարածք, բնակավայր, ռելիեֆ, ժողովրդագրական, լեռնային, թեքություն, մասնատվածություն, մակերևույթ:

А.Григорян

**ОСОБЕННОСТИ СЕЛЬСКОГО НАСЕЛЕНИЯ И РАССЕЛЕНИЕ
СЕЛЬСКОГО ПОСЕЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ КАК ГОРНОЙ
СТРАНЫ**

В статье представлены характерные черты сельского населения и расселения Республики Арцах как горной страны. Проиллюстрированы сущность и роль сельского переселения в развитии горных стран. Приведены особенности сельского переселения в Республике Арцах. Рассмотрены морфологические особенности сельских поселений и географическое положение горной страны. Выявлены факторы, влияющие на естественный прирост. Комплексное развитие регионов республики будет способствовать стабильной развитию общества республики.

Ключевые слова: расселение, диалектика, территория, среда обитания, рельеф, демографический, горный, склон, фрагментация, поверхность

A. Grigoryan**THE PECULIARITIES OF THE RURAL POPULATION AND THE RESETTLEMENT OF THE RURAL SETTLEMENTS OF THE ARTSAKH REPUBLIC AS OF A MOUNTAINOUS COUNTRY**

The article presents the characteristic features of the rural population and the resettlements of the Artsakh Republic as a mountainous country. The essence and the role of the rural resettlement in the development of mountainous countries were illustrated. The peculiarities of the rural resettlement in the Artsakh Republic were given. The morphological features of the rural settlements and the geographical location as a mountainous country were examined. The influencing factors on the natural growth were identified. The complex development of the regions of the Republic will contribute to the development of a stable society of the Republic.

Keywords. *Resettlement, dialectic, area, settlement, topography, demography, mountainous, slope, fragment, part.*

Աշխարհի բոլոր պետություններն ունեն տարբեր բնակլիմայական և տնտեսության զարգացման համար աշխարհագրական տարբեր պայմաններ, այդ պատճառով տարածքի նպաստավոր կամ անբարենպաստ պայմաններն իրենց ազդեցությունն են թողնում հասարակության տարածքային կազմակերպման և բնակավայրերի տեղաբաշխման ու զարգացման վրա: Այդ երևույթն առավել ընդգծված է դրսևորվում լեռնային երկրներում, ինչպիսին է նաև Արցախի Հանրապետությունը: Լինելով միջազգային հանրության կողմից չճանաչված հանրապետություն, գտնվելով տնտեսական շրջափակման մեջ և ենթակառուցվածքների վերականգնման ու կատարելագործման փուլում, շարունակական աճող արտագաղթի պայմաններում՝ կարող ենք հաստատել, որ մեր կողմից ընտրված հետազոտվող թեման աչքի է ընկնում իր արդիականությամբ:

Հասարակության զարգացման ամեն մի նոր փուլ իր ներգործությունն է ունենում թե՛ առանձին բնակավայրերի, և թե՛ բնակավայրերի տարածական համակարգի ու ցանցի, այսինքն՝ տարաբնակեցման բոլոր կողմերի վրա:

Գյուղական տարաբնակեցումը ոչ քաղաքային տարածքներում բնակչության կյանքի տարածքային կազմակերպման ձև է՝ տարբեր տիպի գյուղական բնակավայրերի ամբողջության տեսքով, որոնք նախատեսված են մշտական կամ ժամանակավոր բնակության համար: Տարաբնակեցումն աշխարհագրական տեսանկյունից ուսումնասիրելիս խիստ կարևոր է դառնում բնական միջավայրի հետ փոխազդեցության բացահայտումը: Այս իմաստով կարևորություն են ձեռք բերում լեռնային երկրներում գյուղական տարաբնակեցման և բնական միջավայրի փոխազդեցության ուսումնասիրումը ու ժամանակակից միտումների բացահայտումը, քանի որ լեռնային տարածքներում բնական միջավայրն առանձնանում է

տարաբնակեցման ձևավորման և զարգացման համար ինքնատիպ պայմաններով:

Տարաբնակեցումը մի այնպիսի բարդ համակարգ է, որում անընդհատ տեղի են ունենում փոփոխություններ և զարգացումներ, մշտակա հակասություններ, իսկ հաճախ էլ միաժամանակ գոյատևում են նորը և հինը միասին: Ցանկացած տարածքի տարաբնակեցման համակարգի և գյուղական տարաբնակեցման աշխարհագրական հետազոտություններում առաջնային խնդիրներից մեկը տեղեկատվության հավաքման, մշակման և ներկայացման եղանակներն են, որոնք հնարավորություն են տալիս ցույց տալու, բացահայտելու և գնահատելու գոյություն ունեցող գյուղական տարաբնակեցման պատկերը և բազմազանությունը [3]:

Աշխարհագրական հետազոտության դեպքում պետք է ելնել այն հիմնադրույթից, որ ցանկացած տարածաշրջանում, այդ թվում նաև լեռնային երկրներում, տարաբնակեցումը ձևավորված է տարածաշրջանային, տարածքային-արտադրական, տրանսպորտային, սպասարկման տարածքային համակարգերի հետ փոխազդեցության պայմաններում:

Գյուղական բնակավայրերի աշխարհագրական հետազոտությունը լուծում է կարևոր մի շարք խնդիրներ: Դրանցից են տարաբնակեցման տիպերի վերլուծությունը, գյուղական բնակավայրերի կյանքը և զարգացումը բնութագրող կապերի բացահայտումը:

Լեռնային երկրների գյուղական տարաբնակեցման ուսումնասիրություններում առանձնակի կարևորություն է ստանում բացարձակ բարձրությունը, լանջերի դիրքադրությունը, թեքությունը, ռելիեֆի մասնատվածությունը, բնակչության բաշխվածությունն ըստ բարձրության գոտիների [3]:

Արցախի հանրապետության գյուղական տարաբնակեցումն ունի մի շարք առանձնահատկություններ: Դրանցից են տարածքի սահմանափակ լինելը, արտահայտված լեռնային բնույթը, մակերևույթի հորիզոնական և ուղղաձիգ մասնատվածությունը, թեքությունները, կլիմայական տարբեր և խիստ պայմանները, ջրային և հողային ռեսուրսների անհավասարաչափ բաշխվածությունը, որոշ վայրերում սելավներն ու սողանքները և այլն:

Բնակչության տարաբնակեցման գլխավոր օրինաչափությունը տարաբնակեցման ձևի համապատասխանությունն է տնտեսության զարգացման մակարդակին և առանձնահատկություններին:

Եթե նախկինում բնորոշ էր տարածքի բնակեցման դանդաղ գործընթացը, որը պայմանավորված էր արտադրողական ուժերի ցածր մակարդակով, ապա ինդուստրիալ հասարակարգին բնորոշ է բնակչության ուրբանիզացված տարաբնակեցումը, որն առանձնանում է քաղաքային բնակավայրերում արտադրողական ուժերի աննախադեպ համակենտրոնացումով և գյուղական բնակչության մասնաբաժնի նվազումով:

Բնակչության տարաբնակեցման գործընթացի զարգացումը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնք դասակարգվում են երեք հիմնական խմբի՝

1) սոցիալ-տնտեսական գործոններ (տնտեսության ճյուղերի զուգորդման մակարդակը և ձևավորված տեղաբաշխումը, բնակչության եկամուտների մակարդակի տարածաշրջանային տարբերությունները, կապիտալ ներդրումների բաշխումը, տրանսպորտային ենթակառուցվածքների զարգացումը և այլն),

2) բնական գործոնները (տեղանքի ռելիեֆը, կլիման, հողերը, բնական հարստությունների քանակը և այլն),

3) ժողովրդագրական գործոններ (սրանք նախ և առաջ միգրացիոն գործընթացների տարածաշրջանային տարբերություններն են և բնակչության վերարտադրության գործընթացների ինտենսիվությունը):

Տարաբնակեցման օրինաչափությունները և զարգացման գործընթացները փոփոխվում են ոչ միայն ժամանակի ընթացքում՝ պատմականորեն, այլև կրում են դրանց ազդեցությունը և հանգեցնում են տարաբնակեցման մեծ տարածքային տարբերությունների: Տարաբնակեցման առավել ընդհանուր օրինաչափությունների և կապերի վերլուծության հետ կարևոր է հետազոտել այդ օրինաչափությունների դրսևորումը կոնկրետ տարածքի պայմաններում:

Ընդհանուրի և առանձնահատուկի դիալեկտիկան, բովանդակությունը և ձևերն ունեն կարևոր նշանակություն տարաբնակեցման աշխարհագրական տարբերությունների մեխանիզմը հասկանալու համար [2]:

Արցախի հանրապետության մշտական բնակչություն ունեցող տարածքը սկսվում է 400 մետրից և հասնում մինչև 2000 մետրի: Այստեղ նկատելի է մի օրինաչափություն. լեռնային երկրներում սովորաբար ըստ բարձրության գոտիների բնակչության խտությունը, բնակավայրերի թիվն ու մարդաշատությունը աստիճանաբար նվազում են: Անկախ այն բանից, որ բնակչության զգալի մասն ապրում է քաղաքային բնակավայրերում, Արցախի հանրապետության տարաբնակեցման համակարգում բնակավայրերի ճնշող մեծամասնությունը կազմում են գյուղական բնակավայրերը: Այսպիսով՝ երկրի 392 բնակավայրերից 380-ը գյուղական բնակավայրեր են (մշտական բնակչություն ունի 318-ը, որոնցից 12-ը քաղաքային բնակավայրեր են):

Եթե Հայաստանի Հանրապետությունում, ըստ պրոֆեսոր Լ. Վալեսյանի, առանձնացված են գյուղական տարաբնակեցման համատարած, ցրված, խմբային և շղթայաձև ձևերը. (համատարած տարաբնակեցումը ձևավորվում է խիտ բնակեցված հարթավայրային շրջաններում), ապա

Արցախի հանրապետությունում բացակայում է տարաբնակեցման այս տարբերակը [2]:

Աղյուսակ 1. ԱՀ բնակչության և բնակավայրերի թիվը՝ ըստ շրջանների

Շրջաններ	Բնակչու- թյան թիվը՝ մարդ	Տնտեսությ ունների թիվը	Բնակավայ րերի թիվը	այդ թվում՝ քաղա- քային
1. ք. Ստեփանակերտ				
2. Ասկերան	50405	12957	1	1
3. Հադրութ	17012	4701	45	1
4. Մարտակերտ	12417	3704	42	1
5. Մարտունի	18904	5893	51	1
6. Շահումյան	23119	6407	39	2
7. Շուշի	2755	658	35	1
8. Քաշաթաղ	4524	2030	9	1
	8611	2342	125	4
Ընդամենը	137747	38692	347	12

Ըստ մեր կողմից կատարած հետազոտությունների և վիճակագրական տվյալների՝ Արցախի տարբեր շրջաններում առկա են ցրված, շղթայաձև և խմբային տարաբնակեցման ձևեր:

Արցախի գյուղական տարաբնակեցման հիմնական առանձնահատկությունն այն է, որ այստեղ գերակշռում են փոքր գյուղական բնակավայրերը:

Ուսումնասիրությունների արդյունքում առանձնացրել ենք գյուղական բնակավայրերի վեց տիպ (ըստ բնակչության թվաքանակի).

- 1) շատ մանր՝ մինչև 50 բնակիչ
- 2) մանր՝ 50-200 բնակիչ
- 3) փոքր՝ 200-500 բնակիչ
- 4) միջին մեծության՝ 500-1000 բնակիչ
- 5) մեծ՝ 1000-2000 բնակիչ:

Հատկանշական է, որ շատ մանր, մանր, փոքր և միջին տիպերի դասակարգումները կատարել ենք այն պարզ պատճառով, որ Արցախի բնակավայրերի մեծամասնությունն ունի մինչև 1000 բնակիչ [6]:

Մեծ բնակավայրերը հիմնականում գտնվում են Ասկերանի, Մարտունու և Մարտակերտի շրջաններում:

Ըստ վիճակագրական տվյալների՝ բնակչության թիվը և բնակավայրերի քանակը ԱՀ շրջաններում տեղաբաշխված են հետևյալ կերպ.

Տարաբնակեցման համակարգը բնակչության տարաբնակեցման գործընթացի արգասիք է: Դրանից էլ կարելի է եզրակացնել, որ բնակչության տարաբնակեցումը հենց բնակչության տարածքային բաշխման ու վերաբախման, ինչպես նաև դրանց արդյունքի, այսինքն՝ բնակավայրերի ցանցի ձևավորման գործընթաց է: Այդ գործընթացը ձևավորվում է բարդ և պատմական երկար ժամանակահատվածում բազմաբնույթ ու տարատեսակ գործոնների ազդեցության տակ:

Եթե վերհիշենք տարաբնակեցման կարևոր սկզբունքները, ապա կհամոզվենք, որ շատ կարևոր է անընդհատ զարգացնել և կատարելագործել բնակչության տարածքային տեղաբաշխման կառուցվածքը, քանի որ այն կնպաստի աշխատանքային ռեսուրսների ընդլայնված վերարտադրությանը, տարբեր վայրերում մարդկանց ապրելու լավագույն պայմանների ստեղծմանը, բնակչության կրթության ստանալու, մասնագիտություն ընտրելու, հոգևոր բավարարվածություն ստանալու և մի քանի այլ արժեքներ ձեռք բերելու հնարավորությունների ապահովմանը:

Ուսումնասիրելով Արցախի գյուղական բնակավայրերի ձևավորման և զարգացման պատմությունը՝ կարող ենք ասել, որ տարաբնակեցումը բնակչության և բնակավայրերի տարածական կազմակերպած ամենալավ ձևն է:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունները ցույց են տվել նաև, որ Արցախի տարաբնակեցման համակարգը վերջին մեկ ու կես դարում, աշխարհագրական գործոններով պայմանավորված բավականին լուրջ փոփոխությունների է ենթարկվել: Հետևապես Արցախի տարաբնակեցման համակարգը չի կարելի համարել կայուն և կատարյալ, քանի որ հետպատերազմյան շրջան ապրող երկրում այսօր էլ շարունակվում են նոր բնակավայրերի հիմնման և վերաբնակեցման գործընթացները: Ապրիլյան քառօրյա պատերազմի հետևանքով Մարտակերտի շրջանի ամենախոշոր գյուղերից մեկը հանդիսացող Թալիշ գյուղը, որը ուներ մոտ 1000 բնակիչ, ստիպված տեղահանվեց նույն շրջանի Ալաշան կոչվող տարածքում նոր կառուցվող բնակավայր, և բնակչությունը 1000-ից հասավ 563-ի: Ի դեպ դա միակ օրինակը չէ:

Որպես օրինաչափություն՝ լեռնային երկրներում, ըստ բարձրության, բնակչության խտությունը, բնակավայրերի թիվն ու մարդաշատությունն աստիճանաբար նվազում են: [3]

Այդ օրինաչափությունը խախտվում է ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ Արցախի համար: Հենց դա էլ համարվում է մեր երկու հայկական հանրապետությունների տարաբնակեցման առանձնահատկություններից մեկը: Աշխարհի գրեթե բոլոր երկրներում դիտվում է բնակչության հոսք բարձրադիր տարածքներից դեպի ցածրադիր վայրերը՝ ապրելու նպաստավոր պայմաններ ձեռք բերելու ակնկալիքով: Այսօր Արցախում ճիշտ հակառակ պատկերն է ցածրադիր

գոտիների հաշվին աճում է բարձրագույն գոտիների բնակչության և բնակավայրերի թիվը:

Մեր կողմից կատարվող ուսումնասիրությունների արդյունքում նկատել ենք, որ Արցախի Հանրապետության տարածքը տարածվում է Մարտունու շրջանի Կաքավաձոր գյուղից /280մ/ մինչև Շահումյանի շրջանի Ծար գյուղի /2040 մ/ բարձրությունների միջև:

Հետպատերազմյան շրջանում Արցախի քայքայված տնտեսության և ենթակառուցվածքների վերականգնման, նոր բնակավայրերի ստեղծման, մշակութային և հոգևոր նոր օբյեկտներ կառուցելու համար տարբեր բարերարների ու պետական բյուջեի կողմից հսկայական միջոցներ են ներդրվել, և այդ պրոցեսը շարունակվում է: Դրա համար կառավարությունը նոր տարածքներ է տրամադրում համայնքներին ինչպես պետական պահուստային տարածքներից, այնպես էլ ուրիշ համայնքային տարածքներից: Ուստի ըստ բարձրության գոտիների առանձնացված տարածությունների մակերեսները վերջնական չեն:

Աղյուսակ 2 . Արցախի Հանրապետության բնակավայրերի ցանցի տեղաբաշխումը՝ ըստ բարձրության գոտիների

Բարձրության գոտիները ծովի մակերևույթից հաշված՝ մետր	Տարածությունը		Բնակավայրերի թիվը	
	կմ ²	%	հատ	%
մինչև 200	156,2	1,33	-	-
200-500	248,1	26,16	33	10,68
500-1000	2909,9	24,80	137	44,34
1000-1500	1504,3	12,82	100	32,36
1500-2000	1921,7	16,37	38	12,30
2000-2500	1509,1	12,86	1	0,32
2500-ից բարձր	1250,4	10,66	-	-

Աղյուսակ 3. ԱՀ բնակչության միջին խտությունը՝ ըստ վարչական շրջանների [5]

Վարչական շրջաններ	Բնակչության խտությունը՝ մարդ/կմ ²
Ասկերանի շրջան	14
Հադրութի շրջան	7

Մարտակերտի շրջան	11
Մարտունու շրջան	25
Շուշիի շրջան	12
Շահումյանի շրջան	1
Քաշաթաղի շրջան	2
Ստեփանակերտ	1984

Հիմք ընդունելով մեր կողմից կատարված ուսումնասիրությունները՝ եկանք այն եզրակացության, որ Արցախի Հանրապետության գյուղական տարաբնակեցման ժամանակակից ձևերը բազմազան են և այդ բազմազանությունը ոչ միայն բնական գործոնների հետևանք է, այլև այն պատմական իրադարձությունների, որոնք ուղեկցել են մեր ազգին և շարունակվում են նաև մեր օրերում: Դա վերաբերում է անցյալի ավերիչ պատերազմներին, 20-րդ դարավերջի ազգային – ազատագրական շարժմանը, Ադրբեջանի կողմից հարկադրված պատերազմին, որոնց պատճառով կործանվել և ավերվել են բազմաթիվ բնակավայրեր: Բավական է նշել, որ հանրապետության 392 բնակավայրերից բնակելի են 382-ը, այսինքն՝ 10-ը բնակավայր լրիվությամբ ոչնչացվել է [7]:

Բացի այդ՝ տասնյակ գյուղական բնակավայրեր գրեթե անմարդաբնակ են (բնակչության թիվը չի հասնում 100-ի), նվազել է մարդաշատությունը, փոխվել են կենցաղն ու տնտեսությունը, բնակավայրերի արտաքին տեսքը:

Մյուս կողմից կարևոր է նշել, որ հայրենասեր բարերարների և մեր իշխանությունների կողմից ռացիոնալ վարած քաղաքակրթության շնորհիվ նոր բնակավայրեր են ստեղծվել, վերականգնվել նախկինում ավերված ու բնազրկված գյուղերը: Այս ամենի արդյունքում ձևավորվել է Արցախի Հանրապետության գյուղական բնակչության և բնակավայրերի տարաբնակեցման նոր, ժամանակակից համակարգ, որը կհանդիսանա, տարաբնակեցման ռացիոնալ քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը, կդառնա նախալեռնային և լեռնային, առանձնապես սահմանամերձ շրջաններում փոքր ու մանր գյուղերի խոշորացման ու լքված գյուղերի վերականգնման գրավականը: Հանրապետության շրջանների համալիրային զարգացումը բավարար նախադրյալ կհանդիսանա հանրապետության կայուն հասարակության զարգացման համար:

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, աշխ.գ.դ. Ա.Ռ. Ավագյանը:

ՀՏԴԳԼՅ(2)

Աշխարհագրություն

Վահագն ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԵՊՀ սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոնի վարիչ,
Մարինե ՄԿԼՏՅԱՆ
Երկրագիտության ամբիոնի ասիստենտ

**ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ -
ՌԵԿՐԵԱՅԻՈՆ ՆԵՐՈՒԺԻ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՈՏԱՅՔԻ
ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՀԱՄԱՐ**

Հրազդան գետը, հոսելով ՀՀ կենտրոնական և ամենալայնացված տարածքով, ունի կենսական նշանակություն ՀՀ տնտեսության համար: Նրա աջափնյա հատվածը բնորոշվում է համեմատաբար մեղմ կլիմայով, բավականին անտառապատ ու առանձին հատվածներում աչքի է ընկնում հանքային աղբյուրների ելքերով, որոնք հիմք են տալիս ուսումնասիրելու նրա զբոսաշրջային-ռեկրեացիոն ներուժի հնարավորությունները: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ Հրազդան գետի ավազանը հյուսիսային կեսում զարգացել է և հնարավորություն կա զարգացնելու զբոսաշրջության տարբեր տեսակներ՝ ռեկրեացիա, ճանաչողական, սպորտային, գործարար, էքստրեմալ, ուխտագնացություն, ագրո և էկոտուրիզմ:

Բանալի բառեր՝ ռեկրեացիա, ագրոտուրիզմ, ժամանցային տուրիզմ, մանկական տուրիզմ, ռեկրեացիոն հնարավորություններ

В.Григорян, М.Мкртчян

**ВОЗМОЖНОСТИ ТУРИСТИЧЕСКО-РЕКРЕАЦИОННОГО
ПОТЕНЦИАЛА РЕКИ РАЗДАН ДЛЯ РАЗВИТИЯ ТУРИЗМА В
КОТАЙКСКОМ МАРЗЕ**

Река Раздан, протекая по центральной и самой освоенной территории РА, имеет жизненное значение для хозяйства. Ее правобережная часть характеризуется сравнительно лесистым и отдельными местами отличается минеральными родниками, которые дают основу для изучения возможностей туристско-рекреационного потенциала. В результате изучения выяснилось, что в северной части бассейна реки Раздан развито и есть возможности развития различных видов туризма: рекреации, познавательного, спортивного, делового, экстремального, политического, агротуризма.

Ключевые слова рекреация, агротуризм, детский туризм, развлекательный туризм, рекреационные возможности

V.Grigoryan, M.Mkrtchyan

**THE TOURISM –RECREATIONAL POTENTIAL
OPPORTUNITIE OF THE HRAZDAN RIVER BASIN FOR THE
TOURIZM DEVELOPMENT**

Flowing though the central and most assimilated area of the Armeninan Republic, the Hrazdan river ha a wital importance for the Armenian ecomomic. Its riverside area is characherized with comparatively mild climate and water afforested areas, and in separate part its distinguihed with mineral spring outlets which give us opportunity to tudy their tourizm-recreational potential. As a result of studie its been found out that in the northerm half of the Hrazdan riverside has been development and there is an opportunity to develop different tupes of tourizm, uch as recreationa, educationa,, sport, business, extreme pilgrimade, agro and ecotourizm.

Key words: recreation, agrotourism, entertainment, tourizm, chids tourizm, recreational opportunities.

Ներածություն: Հրազդանի ավազանը հարուստ է ռեկրեացիոն ռեսուրսներով, սակայն դրանց օգտագործումը անբավարար է, անհրաժեշտ է բացահայտել և գնահատել ռեկրեացիոն կարողությունները, տալ դրանց օգտագործման նպատակային ուղիները:

Խնդրի լուծման համար Հրազդանի ավազանի ռեկրեացիոն կարողությունները դիտարկվել են Կոտայքի մարզի ռեսուրսակարողության ընդհանուր դաշտում, որը հնարավորություն է տվել մասնավորից տանելու դեպի ընդհանուրը, համալիրայինը:

Խնդրի դրվածքը: ՀՀ պետական - տնտեսական հեռանկարային ծրագրերում զբոսաշրջությունը հանդիսանում է զարգացման գերակա ուղղություն, ըստ որի էլ օրակարգի հարց է զբոսաշրջության բոլոր հնարավորությունների, որը թույլ կտա ավելի բարձր մակարդակի բացահայտումը, բարձրացնել ծրագրված աշխատանքները:

Հրազդանի ավազանի ռեկրեացիոն ռեսուրսի համալիրային գնահատականը կարող է օրինակ ծառայել մնացած տարածաշրջանների ներուժի գնահատման համար, անցում կատարելով տարածքայինից դեպի հանրապետականը:

Հրազդան գետը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության ջրային հզոր զարկերակներից մեկը: Այն ունի 141 կմ երկարություն: Սկիզբ է առնում Փոքր Սևանի հյուսիսարևմտյան հատվածից՝ ծովի մակարդակից 1897 մ բարձրությունից, հոսում հանրապետության կենտրոնական մասով՝ Արաքսավան գյուղից 4 կմ հարավ-արևելք, ծովի մակարդակից 825 մ բարձրության վրա, հայ-թուրքական սահմանին միախառնվում է Արաքսին: Հրազդանի անկումը կազմում է ավելի քան 1072 մ, թեքությունը՝ ավելի քան 7,6 մ/կմ, ջրահավաք ավազանը՝ 2560 կմ², միջին տարեկան ծախսը՝ 2,6 մ³/վրկ (դիտման կայանը՝ Մասիս), միջին տարեկան հոսքը՝ 0,82 մլրդ մ³: [2, 5, 9]

Հրազդանի վտակներից նշանավոր են աջակողմյան Մարմարիկը, Դալարը, Արագետը, իսկ ձախակողմյան՝ Գետառը: Հրազդանն ունի լճային սնում, որի պատճառով նրա հոսքի ռեժիմը կայուն է, իսկ ավազանում կարևոր դեր ունեն նաև ձնաանձրևային սնումը: Հրազդանի հոսքի ռեժիմը, բացի զարնանից (48,4 %), կայուն է (ձմեռը՝ 16,6 %, ամառը՝ 17, 2 %, աշունը՝ 17,8 %) [3, 208 էջ]: Ինչպես գիտենք, խորհրդային տարիների Հայաստանի տնտեսության արագ զարգացման համար անհրաժեշտ էր էլեկտրաէներգիա և ոռոգման ջուր: Այդ պատճառով Հրազդանի վրա կառուցվեց ջրէկ-ների կասկադ (թվով 6), և անցկացվեց ոռոգիչ ջրանցքներ (թվով 6), այդ թվում ՀՀ ամենաերկար՝ Արգնի-Շամիրամ ջրանցքը: Հրազդանի ջրերով են ոռոգվում շուրջ 45 հազար հա հողատեսքեր Արարատյան դաշտում և նրա եզրավորող սարահարթերում ու սարավանդներում: Գետի վրա կառուցված են երկու ջրամբարներ՝ Երևանյան՝ 4,8 մլն մ³ (Երևանի շրջագծում) և Ախպրակի կամ Ախպարա՝ 5,6 մլն մ³ (Հրազդան քաղաքի շրջագծում, 1780 մ բացարձակ բարձրության վրա) [3,11], [1,616], Մարմարիկի վրա, որոնք ունեն ոչ միայն ոռոգիչ, ջրակարգավորիչ, այլ նաև միկրոկլիմայաստեղծ, ռեկրեացիոն-զբոսաշրջային նշանակություն, որոնց հնարավորությունները դեռևս գրեթե չեն օգտագործվում: Հրազդանի հունը ռելիեֆային տեսակետից բաժանվում է երկու մասի՝ կիրճային և խորը ձորային ու հարթավայրային: Գետի ակունքից մինչև մայրաքաղաք՝ Երևանի հարավային հատվածը՝ Երևանյան լիճ, այսինքն՝ գետի երկարության կեսից ավելին՝ 85 կմ, հոսում է խորը ձորերով, կիրճերով՝ տեղ-տեղ լայնանալով, ստեղծելով բնության անձեռակերտ հուշարձաններ, որոնք ունեն զբոսաշրջային մեծ նշանակություն: Այդպիսին են քարային սյուները և սիմֆոնիաները Երևանի շրջագծում, Բջնիի, Վարսերի, Արգնու տարածքներում, ջրվազները՝ Երևանի, Արգելի տարածքներում, իսկ Մարմարիկի վրա՝ Փյունիկի տարածքում, Դալարի վրա՝ ակունքի շրջանից մինչև Ծաղկածոր:

Հրազդանը դուրս գալով Երևանյան ջրամբարից, մինչև Արաքսին միախառնվելը հոսում է հարթավայրով՝ Արարատյան դաշտով, որտեղ ավերը տեղ-տեղ եղեգնապատ են, հունը՝ գալարուն: Այստեղ Հրազդանն ամբողջությամբ կորցնում է իր զբոսաշրջային նշանակությունը: Գետի զբոսաշրջային ռեկրեացիոն նշանակությունը ավելի է մեծանում նրա ավազանում առկա հանքային աղբյուրների ելքերի շնորհիվ՝ Արգական-Բջնիի, Հանքավան-Մարմարիկի, Արգնու և այլն, որոնց շուրջ ստեղծվել են առողջարաններ ու հանգստյան տներ:

Հրազդանի ավազանի արևմտյան հատվածի լեռնաշղթաները և լեռնաբազուկները բավարար խոնավության առկայության շնորհիվ պատված են անտառներով՝ Ծաղկունյաց, Փամբակի և այլն, որոնք ունեն լավագույն պայմաններ հանգստի կազմակերպման համար: Այստեղ 2600-2700 մ-ից վեր տարածվում են ալպյան մարգագետիններն իրենց ծաղկազարդ գորգերով, որոնք ամառային հրաշալի հանգստավայրեր են և

աչքի են ընկնում սառնորակ աղբյուրների բազմաթիվ ելքերով, հատկապես Գոռգոչ գետակի (Մարմարիկի աջակողմյան վտակ) ակունքների մոտ:

Հրազդան գետի ավազանն աչքի է ընկնում պատմամշակութային արժեքներով, որոնք նույնպես խթանում են տարածաշրջանի զբոսաշրջության և ռեկրեացիայի զարգացմանը: Այստեղ են ծնվել հանրահայտ Օրբելի եղբայրները (Ծաղկաձոր) և հայ նոր գրականության հիմնադիր Խ.Աբովյանը (Քանաքեռ, այժմ՝ Երևան), բացվել են մայրաքաղաքում գործող բազմաթիվ տուն-թանգարանները, պատմության, մասնագիտական թանգարանները, պատկերասրահները, թատրոններն ու մշակույթի պալատները, հուշարձաններն ու հուշահամալիրները:

Հրազդանի ավազանի անբաժան մասն են կազմում նրա շրջակայքում կառուցված պատմամշակութային հուշարձանները՝ Դմաշենի եկեղեցին (12-13-րդ դդ) և խաչքարերը (13-րդ դ.), Մակարավանքը (10-13 –րդ դդ.), Մեղրաձորի եկեղեցին (13-րդ դ.), Ծաղկաձորի Կեչառիս վանական համալիրը (11-13-րդ դդ., Կոտայքի մարզի հոգևոր թեմի նստավայրը), Բջնիի հուշարձանախումբը (5-13-րդ դդ.), Մայրավանքը (10-13-րդ դդ.), Նեղուց Ս. Աստվածածին վանքը (11-13-րդ դդ. Արզական), Երևանի, Աբովյանի, Մասիսի հին և նոր եկեղեցական կառույցները, այդ թվում՝ ռուսականուղղափառ, հրեական (սինագոգա), պարսկական (Կապույտ մզկիթ) և այլն [1,584-654]:

Հրազդան գետի ավազանի զբոսաշրջային - ռեկրեացիոն ներուժի հնարավորությունների շարքում կարևորվում են ավանդույթները, խոհանոցը, գյուղատնտեսության մասնագիտացումը, որոնք կարող են խթան հանդիսանալ ագրոտուրիզմի զարգացման համար: Չափազանց մեծ է մայրաքաղաք Երևանի գետն ավազանի զբոսաշրջային հնարավորությունների գնահատման մեջ:

Կառավարության կողմից առաջարկված զբոսաշրջային տարբեր ձևերին վերաբերող ծրագրերի փաթեթներում ընդգրկված է նաև Կոտայքի մարզը, որի զբոսաշրջային և ռեկրեացիոն մեծ հնարավորություններին տիրում են Հրազդան և Ազատ գետերի ավազանները և Երևան քաղաքը: Զբոսաշրջության և ռեկրեացիայի զարգացմանը, այդ թվում առողջարանային տուրիզմին, նպաստում են ավազանում գործող առողջարաններն ու պանսիոնատները, հյուրանոցներն ու հանգստյան տները, սպորտային բազան և երեխաների հանգստի ճամբարները, ռեստորաններն ու ռեստորանահյուրանոցային համալիրները, ժամանցի ու առևտրի ժամանակակից սրահները և այլն:

Սեփական որոշակի ուսումնասիրությունների և զբոսաշրջության հոսքերով զբաղվող փորձագետների տվյալների հիման վրա փորձ է արվել ներկայացնելու Հրազդան գետի ավազանի զբոսաշրջության կառուցվածքն առանց մայրաքաղաք Երևանի ցուցանիշների:

Աղյուսակ 1

Հրագրան գետի ավազանի զբոսաշրջության կառուցվածքը

Զբոսաշրջության տեսակը	Զբոսաշրջիկներ ի կամ հանգս- տացողների թվա- քանակը (մարդ)	Տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ (%)
Բուժ առողջարարական	37.500	12,3
Մշակութային-ճանաչողական	77800*	25,5
Սպորտային տուրիզմ	23300*	7,6
Ուխտագնացության և հոգևոր այցելության	8600*	2,8
Գործարար	1800	0,6
Հանգստյան	112000	36,8
Մանկական	13000	4,3
Ագրոզբոսաշրջության	850	0,3
Այլ տեսակներ	30.000	0,3
Ընդամենը	304.850	9,8

• Աղյուսակը կազմելու համար հիմք են հանդիսացել armstat.am-ի kotayk.mtd.am-ի տվյալները:

Ուսումնասիրության արդյունքում Հրագրան գետի ավազանում կատարել ենք զբոսաշրջության և ռեկրեացիայի օջախների դասակարգումը ըստ զբոսաշրջության ձևերի գերակայության, և ստացվել է հետևյալ պատկերը:

Աղյուսակ 2

Զբոսաշրջության տեսակները՝ ըստ օջախների

Զբոսաշրջության և ռեկրեացիայի օջախներ	Զբոսաշրջության և ռեկրեացիայի տեսակները
Հանքավան	Առողջարարական և հանգստյան
Մարմարիկի հովիտ	Մանկական, հանգստյան, ճանաչողական
Աղավնաձոր և Մեղրաձոր	Հանգստյան, ճանաչողական
Արզական-Աղվերան	Հանգստյան, գործարար
Ծաղկաձոր	Սպորտային, գործարար, հանգստյան, ուխտանգացության
Արզնի	Առողջարարական


Հրագրանի ավազանում ագրոզբոսաշրջության օջախներ սկսել են ձևավորվել և դրանք տարածված են գետի ակունքից մինչև Երևան: Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մի շարք բնակավայրերում 2-ից մինչև 10 տնտեսություններ (Վարսեր, Քաղսի, Բջնի, Արզական, Ալափարս, Քարաշամբ, Արգել, Արզնի) զբաղվում են ագրոզբոսաշրջությամբ և իրենց հարկի տակ են ընդունում ոչ միայն հայաստանցի, այլ նաև օտարերկրյա զբոսաշրջիկների:

Հաշվումները ցույց են տվել, որ Հրագրան գետի ավազանի զբոսաշրջային ու ռեկրեացիոն ներուժի գնահատման ցուցանիշներն ըստ տեսակների ունեցել են հետևյալ պատկերը. հանգիստ (ռեկրեացիա)՝ 48 %, 48

առողջարարական՝ 21 %, սպորտային՝ 11 %, մանկական հանգիստ՝ 10 %, ուխտագնացություն (հոգևոր)՝ 5 %, գործարար՝ 2 %, այլ տեսակներ՝ 3 %: Ագրոտուրիզմի վերաբերյալ տվյալները բացակայում են:

Գծապատկեր 1

Հրազդան գետի ավազանի զբոսաշրջային -ռեկրեացիոն ներուժի գնահատումը



Հրազդան գետի ավազանի զբոսաշրջային ռեկրեացիոն հնարավորությունների շարքում կարևոր տեղ են զբաղեցնում սպասարկման ենթակառուցվածքները՝ կուլտուր-մշակութային, առևտրային, ժամանցային, հանգստյան գոտիներ, տրանսպորտային և այլն:

Ավազանի որոշ բնակավայրերում ստեղծված են թանգարաններ, մշակույթի տներ ու պալատներ, պետական թատրոն: Ավազանի միակ պետական դրամատիկական թատրոնը Հրազդան քաղաքում է, որը վերջին տարիներին չի գործում: Ուսումնասիրվող տարածքում գործում են երեք թանգարաններ, որիցից մեկը՝ երկրագիտական, իսկ երկուսը՝ պատմական:

Հրազդան գետի ավազանի առողջարանային տուրիզմի վերը նշված հանքային ջրերի առկայությունը նպաստում է նաև ագրոտուրիզմի զարգացմանը:

Ագրոտուրիզմի զարգացման գործում կարևոր դեր ունի հայկական ավանդական խոհանոցը: Այսօր յուրաքանչյուր հայ ընտանիք կարող է ազգային խոհանոցին մասնակից դարձնել այցելուներին: Այն, համադրվելով մեր ազգային հյուրընկալության և հյուրասիրության հետ, անջնջելի տպավորություն և կրկին այցելելու ցանկություն կարող է առաջացնել: Այդպիսի փորձեր են արվում Արզական (պտղաբուծություն, պահածոների զարգացում, օդու թորում, խոհանոց), Արզնի (խաղողագործություն, պտղաբուծություն, թռչնաբուծություն, խոհանոց, հատկապես նաև ասորական խոհանոց և հյուրասիրություն), Քարաշամբ (պտղաբուծություն),

Սուլակ և Քաղսի (հյուրընկալություն և հյուրասիրություն ավանդական խոհանոցի բոլոր տարրերով) [4, 292]:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը զբոսաշրջության զարգացման ծրագրում առանձնակի ուշադրություն է դարձնում ռեկրեացիային և ագրոզբոսաշրջությանը, որտեղ կարևորվում են միջազգային փորձի ուսումնասիրությունը, անհրաժեշտ ենթակառուցվածքների զարգացումը և զբոսաշրջության կառավարման ժամանակակից համակարգի ներդրումը:

Վերջին տասնամյակում իրականացնում են զգալի, ակնառու աշխատանքներ: Պատմական, իսկ երբեմն էլ բնական հուշարձանների մոտ տեղադրվում են բազմալեզու տեղեկատվական ցուցանակներ, աստիճանաբար վերանորոգվում են հուշարձաններին մոտեցող ճանապարհները, բարեկարգվում են հուշարձանները և դրանց շրջակայքը, տեղադրվում են հանգստի տաղավարներ, հուշանվերների վաճառքի կրպակներ, սանհանգույցներ:

Եզրակացություններ: Հայաստանի Հանրապետությունն ունի զբոսաշրջության, այդ թվում ռեկրեացիայի զարգացման համար անհրաժեշտ ներուժ և համապատասխան ներդրումների պայմաններում հնարավոր է ստեղծել ռեկրեացիոն ինդուստրիայի և միջազգային զբոսաշրջության բարդ զարգացած համակարգ, որը խթան կհանդիսանա Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման համար:

Գրականություն

1. Ավետիսյան Ս.Ս., Գրիգորյան Վ.Վ., Հայաստանի Հանրապետության բնակավայրերի տեղեկատու, Երևան, 2018, 1056 էջ:
2. ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2018 թ., Երևան, 2018, 318 էջ:
3. Բաղդասարյան Ա.Բ. և ուրիշներ, Հայկական ՍՍՀ ֆիզիկական աշխարհագրություն, Երևան, 1971, 470 էջ:
4. Գրիգորյան Վ.Վ., Ոսկանյան Ա.Ե., Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական աշխարհագրություն, Երևան, Մեկնարկ, 2016, 334 էջ:
5. Armstat.am ՀՀ վիճակագրական կոմիտե, սոցիալ-տնտեսական բաժին, 2018:
6. Kotayk.mtd.am Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժին, 2018:

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, աշխ.գ.դ. Ա.Ռ. Ավագյանը:

ՀՏԴ 91(338.48)

Աշխարհագրություն

Արամայիս ԱՎԱԳՅԱՆ

Աշխ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ

Լիանա ՄԻՆԱՍՅԱՆ

Արարատի մարզի Այգեզարդ գյուղի

հիմնական դպրոցի ֆիզիկայի ուսուցչուհի

Էլ. հասցե՝ aavagyan@ysu.am

ԷԿՈՏՈՒՐԻԶՄԸ ՈՐՊԵՍ ԱՆՁԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՆ

Հասարակական կյանքի զարգացման արդի բարդություն կրթական համակարգի նպատակն է հումանիստական արժեքներով օժտված, հասարակությանը պիտանի անձի պատրաստումը: Այդ գործում իր կարևոր դերը կարող է կատարել բնական էկոտուրիզմը, որը ի վիճակի է բնական միջավայրի, բնականի, հավերժականի հենքի վրա մարդուն ուղղորդել դեպի ճշմարիտը, հումանիստականը, օգնել ձևավորելու հումանիստական արժեքներով օժտված անձ, արժանապատիվ քաղաքացի՝ նվիրված իր հողին, ջրին, հայրենիքին:

Բանալի բառեր՝ էկոտուրիզմ, հումանիստական արժեքներ, շրջակա միջավայր, կայուն զարգացում, կրթություն, դաստիարակություն, բնություն, հասարակություն, հումանիզմ:

А. Авагян, Л. Минасян ЭКОТУРИЗМ КАК ФАКТОР СТАНОВЛЕНИЯ ЛИЧНОСТИ

В современной действительности общественногo развития целью образования является воспитание и становления личности с гуманистическими ценностями.

В осуществлении этого процесса важную роль может играть экотуризм, который на основе естественной среды и вечных ценностей может направить человека к истинному. Может помочь в становлении личности, наделенной гуманистическими ценностями, достойного гражданина своей Родины.

Ключевые слова экотуризм, гуманитарные ценности, окружающая среда, устойчивое развитие, образование, природа, общество, гуманизм

A. Avagyan, L. Minasyan ECOTOURISM AS A FACTOR OF PERSONALITY DEVELOPMENT

In the modern reality of social development, the purpose of education is the education and formation of a person with humanistic values.

In the implementation of this process, ecotourism can play an important role, which, based on the natural environment and eternal values, can

direct a person to the true. It can help in the formation of a person endowed with humanistic values, a worthy citizen of his motherland.

Key words: ecotourism, humanitarian values, environment, sustainable development, education, nature, society, humanism.

Աշխատանքի արդիականությունը: Հասարակական կանքի զարգացման արդի բարդություն կրթական համակարգի նպատակն է հումանիստական արժեքներով օժտված հասարակությանը պիտանի անձի պատրաստումը:

Կրթական այս ծրագրի բարդ հանգուցալուծման գործում կարևոր դեր կարող է կատարել էկոտուրիզմը, որը ի վիճակի է շրջակա բնական միջավայրի ծանոթության միջոցով մեկ ընդհանրության բերել բնության մասին գրականության, արվեստի, բնագիտության տարբեր առարկաներից ստացած գիտելիքները: Ընդ որում՝ այդ ընդհանրության վերջնականապես կնքվի է կայուն հայեցակարգ ստեղծել բանականի ու բնականի միջև:

Հանգուցալուծման ուղիները: Խնդրի լուծման ճանապարհը աշակերտին դեպի բնություն տանելն է, բնական երևույթների հետ ծանոթացնելը, բնական երևույթների ծագման, էության, գործունեության վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ տալը, իր գեներին մոտեցնելը:

Մարդը շրջակա միջավայրի ընկալումը սկսում է «գենի կանչով», գենը հողի, ջրի կանչն է, հողում և ջրում նախնիների սրբացված մասունքներն են: Ինչպես Ռ. Հարությունյանն և Ե. Քոչարյանն են նշում. «Անհատի մոտ արյան կանչն է», «ժառանգական հիշողությունը», «պատմական էվոլյուցիոն հիշողությունը» [1]:

Հիշողություն, որը մարդուն տանում է դեպի բնություն, դեպի մայր հողը, հայրենականը, ինչպես Հ. Հովհաննիսյանն է գրում. «Քո հողմերն են իմ մեջ ահագնում անդուլ, երբ կարիք եմ գգում գերբնական թափի: Քո լեռներն են ինձ միշտ ապրելու տենչ տալիս» [2]:

Գենը, հինը և իրականը, բնականը և բանականը ձուլվում ընդհանրանում են Հ. Թումանյանի հայոց լեռներում բանաստեղծության մեջ:

Տանում ենք հրնուց մեր գանձերն անգին,

Մեր գանձերը ծով,

Ինչ որ դարերով

Երկնել է, ծընել մեր խորունկ հոգին

Հայոց լեռներում... [3]

Հայրենականը կանչում և ներշնչում է:

Երկի՛ր, արեգակի ու անհունի առաջ

Դու ծնկածալ աղոթք, վեր խոյացող դու ծես: [4]

Բնությունը մարդու էության մեջ է: Ինչպես Ա. Իսահակյանն է ներշնչում.

Տիեզերքի պերճ հյուսվածքն եմ,

Իմ մեջ երկինքն է երգում.[5]

Միայն բնության խորը ներշնչանքն է Ա. Պուշկինին տվել գրելու.

Արձակ դաշտում ալեծածան,
 Զյունն է տալիս արծաթին
 Լուսնկա է, ճամփով այդ լույս
 Սլանում է եռաձին [6]:

Բնության և բնականի իմացությունը տեսնելու, զգալու, ներշնչվելու հզոր միջոց են: Այդ ներշնչանքով են երկնել Հ. Այվազովսկին և Մ. Սարյանը: Հ. Այվազովսկու մոտ ծովի տարերքն է, մեկ խաղաղ ու անդորր լուսնկա գիշերն է ննջում ծովում, մեկ իններորդ ալիքն է երկիրն ու երկինքը խառնում: Բայց արվեստագետի նուրբ հոգին իններորդի դժոխքում մարդու համար ճանապարհ է բացում, այո, փրկության հույսը կա, հեռվում արեգակի դալուկ լույսն է կանչում:

Մ. Սարյանի նկարներում հայոց աշխարհի բոսոր գույներն են, միլիոնավոր տարիներ առաջ ժայթքած հրաբուխների ցուրերը, շինականի արարած դաշտերի գույները: Այստեղ բնականը և բանականը, հեռավոր անցյալը և ներկան, երկնայինը և երկրայինը ձուլվում են միմյանց և տանում դեպի հավերժություն:

Հավերժության երաշխավոր են մշակութային արժեքները՝ վիշապաքարերը և խաչքարերը, տաճարները, վանքերը, եկեղեցիները, ամրոցները:

Բնականին ուղեկցելու, հաղորդակից դարձնելու միջոցը հավատքն է՝ տիեզերականին ու Աստծուն նվիրվածությունը: Ինչպես նշում է Լ. Ն. Տոլստոյը «Կրոնը կոչված է պատասխանելու այս հարցին, թե ինչ է կյանքի իմաստը» [7]: Կյանքի իմաստը շրջակա միջավայրի հետ ներդաշնակ ապրելն է: Իսկ ներդաշնակությունը հոգևոր հարստություն է, բնության ճիշտ ընկալումը: Ինչպես Վ. Ի. Վերնադսկին է նշում, «Հոգևոր գաղտնիքների մեջ խորանալով՝ կարելի է լսել երկնային լուսատուների ու երկրի շրջակա միջավայրի ներդաշնակությունը» [8]:

Բնության ներդաշնակությունը մարդուն՝ անհատին, հասցնում է բնականին, տիեզերականին, աստվածայինին: Նրա մեջ գերակայում են հոգևորը, հոգեբանականը, հումանիստականը: Հումանիստական արժեքներով էլ որոշվում է անձի վերաբերմունքը շրջակա միջավայրի նկատմամբ: Իսկ այդ որոշումը օրվա հրամայականն է, կայուն զարգացման նախապայմաններից մեկը: Մարդ-բնություն հարաբերություններում մարդը, հասարակությունը, լինելով սուբյեկտ, պետք է փոխի իր վերաբերմունքը օբյեկտի՝ բնության նկատմամբ՝ առավելապես հաշվի նստելով նրա օրենքների, օրինաչափությունների հետ, իր գործունեությունը ներդաշնակեցնելով դրանց հետ [9]:

Ինչպես նշում է Մ. Կարապետյանը, «Էկոլոգիական խնդիրների մարդածին հիմքը ցույց է տալիս, որ մենք շրջապատող աշխարհը փոխում ենք մեր ներքնաշխարհին համապատասխան ձևով, ուստի և բնության ձևափոխումը պետք է սկսել հոգու այլակերպումից» [10]: Դրան հասնելու միջոցը կրթվածության մակարդակի բարձրացումն է:

Մարդ - բնություն ներդաշնակության մթնոլորտում ձևավորվում է տիեզերական հարստությամբ, հումանիստական արժեքներով օժտված անձը: Անձ, որը իր գիտելիքների մակարդակով կառուցում է իր տունը, ապրելավայրը, որտեղ կան բոլոր պայմանները կայուն զարգացման համար:

Գիտելիքահենք մթնոլորտի ձևավորման ուղիներից մեկը միջառարկայական արտադասարանային ուսուցման կազմակերպումն է, դասարանում ստացած տեսական գիտելիքների ամրապնդումը, միջառարկայական կապերի ստեղծումն ու համալիրային ընդհանրացնող գաղափարի առաջացումը: Այստեղ արդեն աշակերտը հնարավորություն է ստանում տարբեր առարկաներից՝ աշխարհագրությունից, ֆիզիկայից, պատմությունից, գրականությունից, ստացած գիտելիքների հենքի վրա ձևավորելու իր մտածելակերպը՝ աշխարհայացքը, որն արդեն կայուն հիմքի, խորը գիտելիքների վրա, հենված վերաբերմունք է շրջակա բնական միջավայրի նկատմամբ, բերում նրա օպտիմալացման:

Իսկ մարդ-բնություն հարաբերությունների օպտիմալացումը, բնական միջավայրի որակի պահպանումը անհրաժեշտ պայման է ոչ միայն մարդկային կայուն զարգացման, այլև համընդհանուր աղետի կանխման, մարդկային հարատևման համար [9-17]:

Եզրակացություններ:

- Մարդ-բնություն փոխհարաբերությունը դեպի կայուն մարդկային զարգացման ուղիներից մեկն է:
- Մարդ-բնության փոխհարաբերության ներդաշնակությանը կարելի է հասնել դպրոցական կրթական համալիրային ծրագրերի ստեղծման միջոցով:
- Համալիրային ծրագրերի իրագործման միջոցով զարգացնել միջառարկայական կապերը, ուսուցումը ուղղորդել դեպի հումանիստական արժեքները:
- Օգնել ձևավորելու հումանիստական արժեքներով օժտված անձ արժանապատիվ քաղաքացուն, իր հողին ու ջրին, հայրենիքին, պետությանը, ժողովրդի իդեալներին նվիրված մարդուն: Մարդ, որի ընդհանրացված մտածելակերպում ներդաշնակ կերպով անցում է կատարվում տիեզերականից դեպի բանականը:

Գրականություն

1. Հարությունյան Ռ., Քոչարյան Ն., Հայ ժողովրդի մարդաբանություն և էկոլոգիական գենետիկան, Երևան, 1996, էջ 8:
2. Հովհաննիսյան Հ., Հայրական երգ, Երևան, 1972, էջ 19:
3. Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հատոր III, Երևան, 1969, էջ 172:
4. Դավթյան Վ., Լույսն իբրև հաց (հատընտիր),

- բանաստեղծություններ և պոեմներ, Երևան, 1980, էջ 12:
5. Իսահակյան Ա., Երկեր, Երևան, 1987, էջ 20:
 6. Պուշկին Ա., Ընտիր երկեր, Երևան, 1985, էջ 194:
 7. Толстой Л. Н., Полное собрание, М., 1950, с. 427.
 8. Вернадский В. И., Избранные труды по истории науки, М., 1981, с. 51-52.
 9. Մարդկային զարգացման հիմնախնդիրներ, Երևան, 2001, էջ 17:
 10. Կարապետյան Մ., Բնությունը և էթիկան, Երևան, 2010, էջ 93:

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, աշխ.գ.դ. Ա.Ռ. Ավագյանը:

ՀՏԴ 911.3(479.243)

Աշխարհագրություն

Արթուր ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Մարտունու շրջանի Խերխանի հիմնական

դպրոցի աշխարհագրության ուսուցիչ

Էլ. հասցե՝ artur.abrahamyan.1122@mail.ru

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ՇԱՐԺԻ ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1994թ. զինադադարից հետո Արցախի Հանրապետությունում տեղի ունեցած տարբեր բնույթի գործընթացները որոշակի ներգործություն են ունեցել գյուղական բնակչության բնական շարժի վրա՝ առաջացնելով տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական և, ինչու չէ, քաղաքական տիպի խնդիրներ: Հավելենք, որ պետության կողմից ժողովրդագրական քաղաքականության գիտական հիմունքներով մշակման ու կիրառման համար մեծ կարևորություն ունի ԱՀ գյուղական բնակչության բնական շարժի վերլուծությունն ըստ շրջանների: **Բանալի բառեր**՝ բնական աճ, մարդահամար, ծնելիության գործակից, բնական շարժ, պտղաբերության տարիք, սեռատարիքային կազմ, մշտական բնակչություն, տնային տնտեսություն:

А. Абрамян

СОВРЕМЕННЫЕ ТЕНДЕНЦИИ И ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ ЕСТЕСТВЕННОГО ДВИЖЕНИЯ СЕЛЬСКОГО НАСЕЛЕНИЯ РЕСПУБЛИКИ АРЦАХ

После прекращения огня 1994 года различные процессы, происходящие в республике Арцах оказали определенное влияние на естественное движение сельского населения, вызывая экономическое, социальное, демографическое и почему не не политические вопросы. Добавим что для лучшей демографической политики с научном основанием со стороны государства имеет большое значение анализ естественного стока сельского населения в республике Арцах.

Ключевые слова: естественный рост, перепись, коэффициент рождаемости, естественное движение, возраст плодородие, половой и возрастной состав, постоянное население, домашняя экономика.

A. Abrahamyan

THE NATURAL MOVEMENT OF THE RURAL POPULATION OF ARTSAKH THEIR MODERN FORECAST AND FEATURES

Following the 1994 ceasefire various processes, occurring in the republic of Artsakh had a certain impact on the natural movement of the

rural population causing economic social, demographic and why not political issues. We add that for a better demographic policy with a scientific basis is of great importance analysis of the natural runoff of the rural population in the republic of Artsakh.

Key words: *natural growth, census, birth rate, natural movement, age fertility, sexual and age composition, permanent population, home economy.*

Պատմական երկարատև ժամանակաշրջանում Արցախի զարգացման ներքին և արտաքին պայմանների ազդեցության հետևանքով լուրջ, հաճախ նաև ճակատագրական փոփոխություններ են կատարվել բնակչության միգրացիաների, տեղաբաշխման և ժողովրդագրական տարբեր գործընթացներում: Արցախի Հանրապետության բնակչության մեջ վերջին ժամանակներում տեղի ունեցած սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական համակարգի վերափոխումները զգալի դրսևորումներ են ունեցել գյուղական բնակչության բնական շարժընթացի առանձնահատկությունների վրա: Ուստի աշխատանքի նպատակն է բացահայտել ԱՀ գյուղական բնակչության բնական շարժի վրա ազդող գործոնները, շրջանային մակարդակով համեմատություններն ու առանձնահատկությունները, արդի վիճակը, պատճառահետևանքային կապերը: Ստացված փաստական նյութերը և հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ԱՀ գյուղական բնակչության բնական շարժի արդի վիճակը գնահատելու և կարգավորման արդյունավետ քաղաքականություն մշակելու համար:

1994թ. զինադադարից հետո գյուղական բնակչության ծնելիության բացարձակ թիվը ԱՀ-ում աճել է գրեթե 1.5, իսկ հարաբերական ցուցանիշը՝ մոտ 1.3 անգամ: Դրան զուգահեռ, գյուղական բնակչության մահացության բացարձակ թիվը աճել է 1.08, բայց հարաբերական ցուցանիշը նվազել 0.9 անգամ (տեղի ունեցած փոփոխությունների մասին տե՛ս աղյուսակ 1-ում ներկայացված ցուցանիշները): Եթե մահացության բացարձակ թվի աճն ինչ-որ չափով պայմանավորված է գյուղական բնակչության բացարձակ թվի ավելացումով (1995-2016թթ. գյուղական բնակչությունն աճել է մոտ 1.2.), ապա գյուղական բնակչության մահացության հարաբերական ցուցանիշի նվազելը պայմանավորված է սոցիալական պայմաններով, առողջապահական համակարգի ընդլայնումով, գյուղական բնակչության ժողովրդագրական իրավիճակում տեղի ունեցած փոփոխություններով: 2017թ. դրությամբ Արցախի գյուղական բնակչության մահացության գործակիցը 2001թ. համեմատությամբ ավելացել է 1.0%-ով կամ մոտ 20.5 տոկոսով: Ծնելիության և մահացության ցուցանիշների վերը նշված փոփոխությունների պատճառով 2017թ. ԱՀ գյուղական բնակչության բնական աճի գործակիցը կազմել է 6.1%, որը 1995թ. համեմատությամբ ավելացել է 2.1 անգամ:

ԱՀ գյուղական բնակչության բնական շարժընթացը (1995-2017թթ.)
[Աղյուսակ 1]

Տարի	Ծնվ.	Մահ.	Բն. աճ	Գործակիցը (1000 բնակչի հաշվով) %			ԱՀ գյուղական բնակչ. թիվը՝ (հազ.)
				Ծնելիություն	Մահաց.	Բն. աճ	
1995	745	586	159	13.5	10.6	2.9	55 200
1997	808	610	198	13.4	10.1	3.3	60 200
1999	829	618	211	12.7	9.4	3.3	65 400
2001	1144	556	588	17.1	8.3	8.8	67 000
2003	952	653	299	14.0	9.6	4.4	67 900
2005	872	620	252	13.0	9.2	3.8	67 200
2006	900	630	270	13.4	9.4	4	66 900
2007	886	647	239	13.2	9.6	3.6	67 200
2008	1028	699	329	15.3	10.4	4.9	67 200
2009	1281	673	608	19.1	10.0	9.1	67 200
2010	1312	747	565	19.3	11.0	8.3	68 100
2011	1130	716	414	16.6	10.5	6.1	68 200
2012	1087	660	423	15.7	9.6	6.1	68 800
2013	1028	690	338	14.9	10.0	4.9	67 300
2014	982	688	294	15.2	10.7	4.6	67 400
2015	1086	671	415	17.0	10.5	6.5	63 000
2016	1109	633	476	17.5	10.0	7.5	64 000
2017	976	589	387	15.3	9.3	6.1	63 700

1995-2017թթ. Արցախի գյուղական բնակչության ծնելիության գործակիցն ավելացել է 1.3, իսկ բնական հավելաճի գործակիցը՝ 2.6 անգամ: 1995-2017թթ. գյուղական բնակչության բացարձակ թիվն ավելացել է 1.2 անգամ, սակայն տեղի է ունեցել մահացության բացարձակ թվի ավելացում՝ գործակցի նվազումով:

2008-2017թթ. ընթացքում հանրապետությունում գյուղական բնակչության միջին տարեկան բնական աճը կազմել է 425 մարդ, իսկ բնական հավելաճի միջին տարեկան գործակիցը 6.4‰: Վերջինս այդ ընթացքում ավելացել է 2.5‰-ով:

ԱՀ Ազգային վիճակագրական ծառայության տեղեկագրերում պարունակվող փաստական նյութի հիման վրա կազմել ենք առանձին շրջանների բնական շարժի ցուցանիշները և դրանց փոփոխությունը 2005 և 2015 թվականների մարդահամարների արդյունքների հիմքի վրա: Հաշվի առնելով, որ ԱՀ շրջաններում (բացի Շուշիի շրջանից) բնակչության ճնշող մեծամասնությունը գյուղաբնակ է, հետևապես Աղյուսակ 2-ի տվյալները գրեթե նույնությամբ կարտահայտեն շրջանների գյուղական բնակչության շարժընթացի մոտավոր պատկերը:

Շրջանային կտրվածքով 2005 և 2015թթ. Աղյուսակ 2-ի վերլուծությունից պարզվում է որ.

- Բացի Հադրութի և Շահումյանի շրջաններից՝ մյուսներում նկատվել է բնակչության ծնելիության գործակցի ավելացում, իսկ բնական աճի գործակցի ավելացում տեղի է ունեցել Հադրութից, Շահումյանից, Քաշաթագից բացի մյուս շրջաններում:

- ծնելիության գործակցի և բնական աճի բարձր (3-‰-ից) ցուցանիշ է գրանցվել Ասկերանի, Մարտունու և Շուշիի շրջաններում:

● Բնական աճի գործակիցը նվազել է Հաղորթի, Շահումյանի և Քաշաթաղի շրջաններում, որտեղ գյուղական բնակավայրերի ընդգրկվածությունը տարաբնակեցման համակարգում թերի է, առկա են բնակչության կենսագործունեության ցիկլերի իրականացման դժվարին պայմաններ, և ունեն ծայրամասային դիրք:

● Բացի Ասկերանի, Հաղորթի և Մարտունու շրջաններից՝ մյուսներում առկա է մահացության գործակցի ավելացում, որն ամենաբարձրն է Քաշաթաղի շրջանում՝ 1.4‰:

Բնակչության բնական աճի ամենաբարձր ցուցանիշը հանրապետությունում գրանցվել է 2008թ. հոկտեմբերի 16-ի Արցախյան Մեծ հարսանիքին հաջորդած 2 տարում¹: Այսպես՝ 2009թ.-ին 1000 բնակչի հաշվով ԱՀ գյուղական բնակչության բնական հավելաճի ցուցանիշը կազմել է 9.1‰:

ԱՀ բնակչության շարժընթացը՝ ըստ շրջանների
[Աղյուսակ 2]

Շրջաններ	2005			2015			Փոփոխությունը /2005-2015թթ.-ին/		
	Ծ	Մ	Բս	Ծ	Մ	Բս	Ծ	Մ	Բս
Ք. Ստեփանակերտ	15.0	8.2	6.8	20.3	8.4	11.9	5.3	0.2	5.1
Ասկերանի շրջան	10.6	10.8	-0.2	14.6	9.8	4.5	4.0	-1	4.7
Հաղորթի շրջան	15.7	10.9	4.8	14.4	10.2	4.3	-1.3	-0.7	-0.5
Մարտակերտի շրջան	15.6	12.1	3.5	17.3	12.2	5.1	1.7	0.1	1.6
Մարտունու շրջան	13.3	10.7	2.6	16.3	9.4	6.9	3	-1.3	4.3
Շահումյանի շրջան	20.4	1.6	18.8	16.8	2.6	14.2	-3.6	1	-4.6
Շուշիի շրջան	14.1	6.4	7.7	18.3	6.9	11.3	4.2	0.5	3.6
Քաշաթաղի շրջան	17.6	3.0	14.6	17.8	4.4	13.4	0.2	1.4	-1.2

Մահացության գործակցի համեմատաբար բարձր ցուցանիշով առանձնանում են Մարտակերտի և Հաղորթի շրջանները, որտեղ մահացության ցուցանիշը կազմում է համապատասխանաբար 12.2‰ և 10.2‰²: Դրանք համեմատելով Աղյուսակ 3-ում բերված գյուղական բնակչության տարիքային բաշխման հետ՝ կարելի է ասել, որ մահացության գործակցի բարձր ցուցանիշները պայմանավորված են նշված շրջաններում գյուղական բնակչության մեծահասակների մասնաբաժնի ավելացմամբ: Այսպես, 80-ից բարձր տարիքի գյուղական բնակչության բաժինը Մարտակերտի շրջանում 5% է, Հաղորթի շրջանում՝ 4.4%, իսկ Մարտունու շրջանում՝ 4.2%: Ընդ որում, եթե համեմատելու լինենք 1-ից ավելի քաղաքային բնակավայրեր ունեցող Քաշաթաղի և Մարտունու շրջանների՝ 80-ից բարձր տարիքի քաղաքային բնակչության ցուցանիշները, ապա կլինի Քաշաթաղի շրջանի համար 0.4%, իսկ Մարտունու շրջանի համար՝ 3.4%:

¹ Տե՛ս **Աբրահամյան Ա.**, ԼՂՀ քաղաքային բնակավայրերի ժողովրդագրական գործընթացների վերլուծությունը (20-րդ դարի վերջից մինչև 2015թ.), (Արցախի Հանրապետության կազմավորման 25-րդ տարեդարձին նվիրված գիտական ընթերցումներ, Պրակ 1): Ստեփանակերտ, 2016, էջ 34:

² ԼՂՀ ԱՎԺ Ժողովրդագրական ժողովածու: Ստեփանակերտ, 2017, էջ 11-12:

Արցախի Հանրապետության բնակչության տարիքային բաշխումը՝ ըստ շրջանների գյուղական և քաղաքային բնակավայրերի կտրվածքով (2015թ. մարդահամարի արդյունքներով) [Աղյուսակ 3]

Տարիքային խումբը	Ամերանի գյուղական	Ամերանի քաղաքային	Հայրուժի գյուղական	Հայրուժի քաղաքային	Մարտակերտի գյուղական	Մարտակերտի քաղաքային	Մարտունու գյուղական	Մարտունու քաղաքային	Շահումյանի գյուղական	Շահումյանի քաղաքային	Շուշիի գյուղական	Շուշիի քաղաքային	Քաջաթալի գյուղական	Քաջաթալի քաղաքային
0-4	1275	164	775	285	1390	453	104 2	756	288	85	74	405	921	393
5-9	1181	153	774	240	1386	412	100 9	797	311	68	73	398	839	382
10-14	1050	108	633	230	1224	412	100 7	658	251	63	10 7	318	687	321
15-19	1112	120	710	230	1059	345	888	546	243	50	11 1	328	564	238
20-24	1079	152	718	256	1040	293	857	595	167	56	79	331	619	290
25-29	1234	198	719	273	1235	430	101 6	753	189	66	83	355	729	377
30-34	1113	172	578	280	1159	362	807	679	180	55	59	400	652	329
35-39	1030	114	604	247	974	341	699	625	135	53	80	294	455	242
40-44	810	97	493	188	688	253	673	494	127	32	72	229	390	209
45-49	845	108	477	166	618	198	740	466	94	31	54	191	365	174
50-54	896	147	490	153	837	205	859	521	133	43	69	233	413	209
55-59	842	133	485	146	854	210	766	590	119	42	77	222	478	177
60-64	637	83	375	135	623	153	582	373	75	12	47	131	308	147
65-69	550	67	287	97	448	135	423	306	42	10	39	89	165	81
70-74	280	37	145	31	266	48	253	151	13	5	19	35	53	29
75-79	484	65	291	73	498	114	466	241	20	7	32	63	78	29
80-84	324	32	212	40	412	65	295	187	15	1	25	26	28	12
85+	274	14	183	32	342	49	245	108	8	1	25	16	12	5
Ընդ.	1501 6	1964	8979	310 2	1505 3	447 8	126 27	884 6	2410	68 0	11 25	4064	775 6	364 4
0-15	3741	454	2349	799	4236	135 2	329 0	236 7	906	22 7	27 5	1220	255 8	115 3
16-62	9136	1262	5372	1981	8602	2651	7431	5347	1389	421	683	2561	4763	2282
63 +	2139	248	1258	322	2188	475	1906	1132	115	32	167	283	435	209

Վերջինս բացատրվում է նրանով, որ 2013թ. Ճարտար գյուղական համայնքը ստացավ քաղաքի կարգավիճակ:

1994 թվականին հաջորդող տարիներն ԱՀ-ում ուղեկցվեց ծնելիության բռնկումով: Դա բացատրվում է նախ զինադադարի կնքմամբ, հետո տնտեսության ձևերի փոփոխմամբ, մասնավորապես սեփականաշնորհմամբ: Դրա շնորհիվ բարձրացան գյուղական բնակչության ամուսնության գործակիցը և ծնունդը: Պատերազմից հետո շատ ընտանիքներում խախտված վերարտադրությունն ընթացքի մեջ մտավ և

ծնվող երեխաների թիվն ավելացավ: Ծննդաբերության գործակիցը բարձրացավ նույնիսկ պտղաբերության բարձր տարիքային խմբերում:

Բնակչության բնական շարժի իրավիճակը բնութագրող կարևորագույն գործոններից են ամուսնությունը, ամուսնալուծությունը, պտղաբերության տարիքի բնակչության բաժինը ընդհանուր բնակչության մեջ, սոցիալական պայմանները, բնակչության կենսամակարդակը և այլն¹: 2012-2016թթ. տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ գյուղական բնակչության մեջ պտղաբերության գործակցի մեջ համեմատաբար աճ է գրանցվել (2.3-ից բարձրացել է 2.5):

*Ծնվածների բաշխումն ըստ ծննդի կարգի՝ գյուղական բնակավայրերում
(2013-2016թթ., %-ներով)*

[Աղյուսակ 4]

Հերթական ծնունդը	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Առաջին	33.8	30.7	28.8	29.0
Երկրորդ	28.5	29.8	28.3	27.6
Երրորդ	20.1	21.2	23.3	20.2
Չորրորդ	10.7	8.2	11.6	12.5
Հինգերորդ և բարձր	6.9	10.1	8.0	10.7

Աղյուսակ 4-ի տվյալների վերլուծությունից պարզ է դառնում, որ գյուղական բնակավայրերում ծնվածների բաշխման երրորդ և չորրորդ ծննդի կարգի մեջ բավականին տարբերություն կա, իսկ չորրորդ և հինգերորդ ու բարձր ծննդի կարգի միջև տարբերությունը քիչ է: Սա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ գյուղական բնակավայրերում ընտանիքի կազմավորման վրա մեծ ազդեցություն ունեն պետական միջոցներից հատկացվող ֆինանսական օգնությունները, կառուցվող բնակարանները և այլն:

Ծնելիության ընդհանուր գործակցի վրա լուրջ ազդեցություն է ունեցել մի կողմից կանանց ընդհանուր թվի մեջ պտղաբերության տարիքի կանանց տեսակարար կշռի փոփոխությունը, իսկ մյուս կողմից՝ այդ տարիքի կանանց տարիքային խմբերի անբարենպաստ հարաբերակցությունը: Վերջինս դրսևորվում է նաև արդի ժամանակներում: Եթե 2012թ. 20 տարեկանից ցածր կանանց ծնելիության տարիքային գործակիցը հազար կնոջ հաշվով կազմել է 28.5‰, ապա 2016թ. նույն ցուցանիշը նվազել է և դարձել 15.9‰: Դրան հակառակ բավականին բարձրացել է 35-39 տարեկան կանանց ծնելիության տարիքային գործակիցը, որը 2012թ. 26.0‰-ից 2016թ. բարձրացել է և կազմել 62.1‰²:

Գյուղական բնակչության մեջ առաջին անգամ ամուսնացողների միջին տարիքը (ըստ շրջանների 2012-2016թթ.) թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց մոտ նվազել է: Այսպես, առաջին անգամ ամուսնացողների միջին տարիքը

¹ Տե՛ս Պոտոյան Ա., Գրիգորյան Ա., Լեոնային Ղարաբաղի գյուղական բնակավայրերի սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրները, ԱրՊՀ Գիտական տեղեկագիր (Բնագիտական), Ստեփանակերտ, 2016, էջ 63-67:

² ԼՂՀ ԱՎԾ ժողովրդագրական ժողովածու: Ստեփանակերտ, 2017, էջ 32:

կանանց մոտ 2012թ. կազմել է 24.1 տարի, իսկ 2016թ.՝ 23.1: Տղամարդկանց մոտ նույն ցուցանիշը 2012թ. կազմել է 27.9, իսկ 2016թ.՝ 26.8:

Այսպիսով՝ վերլուծության արդյունքներից կարելի է եզրակացնել, որ.

1. ԱՀ գյուղական բնակավայրերում բնական աճի դրսևորման շարժառիթները բազմազան են: Դրանք անմիջական կախվածության մեջ են գտնվում երիտասարդների ամուսնության տարիքից: Վաղ տարիքում ամուսնացող կանայք ավելի շատ երեխաներ են ունենում:

2. ԱՀ շրջանների գյուղական բնակչության բնական շարժի ցուցանիշների միջև տարբերությունները պայմանավորված են մի շարք գործոններով, մասնավորապես առանձին շրջանների աշխարհագրական դիրքով և սոցիալ-տնտեսական արդի իրավիճակով:

3. 2011-2013թթ. գյուղական բնակչության մեջ ծննդաբերության անկում նկատվեց, ինչը մասնակիորեն կարելի է բացատրել բնակչության տարիքային կազմի փոփոխությամբ, որի հետևանքով բնակչության վերարտադրության տեմպերը և ծննդաբերության ընդհանուր գործակիցը սկսել են նվազել: Տարիքային կազմի փոփոխությունը զուտ ժողովրդագրական բնույթի գործոնների հետևանք է, սակայն կարող է հանգեցնել նաև ծննդաբերության ընդհանուր գործակցի բարձրացման՝ պտղաբերության տարիքի կանանց համեմատաբար բարենպաստ կազմի դեպքում: 2014թ. ԱՀ գյուղական բնակչության մեջ ծննդաբերության գործակցի բարձրանալն առավելապես բացատրվում է սոցիալ-տնտեսական գործոններով, ուստի անհրաժեշտ է առաջիկա տարիներին ուշադրության կենտրոնում պահել և պետական բյուջեից ավելի շատ ֆինանսական միջոցներ տրամադրել նշված գործոնների հավասարակշռությունը պահպանելու համար:

4. Մահացության գործակցի համեմատաբար բարձր ցուցանիշով առանձնանում են Մարտակերտի և Հադրութի շրջանները: Այստեղ մահացության գործակցի բարձր ցուցանիշները պայմանավորված են նշված շրջաններում գյուղական բնակչության մեջ մեծահասակների մասնաբաժնի ավելացմամբ: Սակայն այդ շրջաններն, ի զարմանս բոլորի, աչքի են ընկնում ծնելիության բարձր ցուցանիշներով:

5. Մահացության բարձր ցուցանիշներ առաջիկա տարիներին կարելի է կանխատեսել նաև Մարտունու շրջանի համար:

6. Գյուղական բնակչության թվաքանակի շարժընթացի վրա էական ազդեցություն ունի գյուղական բնակավայրերում մշակութային, առողջապահական, առևտրական, կրթական սպասարկումը:

7. Հանրապետության բնակչության բնական շարժն առավել սուր դրսևորումներ ունի բնակչության թվաքանակով փոքր գյուղական բնակավայրերում:

Արցախի Հանրապետության գյուղական բնակչության շարժի վրա որոշակի նեգործություն են ունեցել ոչ միայն գյուղում իրականացվող ագրարային քաղաքականությունը, այլև ժողովրդական տնտեսության

ճյուղերի ինդուստրիալ հիմունքներով վերափոխումը, մասնավորապես, արդյունաբերության ու գյուղատնտեսության մեջ դրսևորվող և անընդհատ ծավալվող նոր կապերը:

Գրականություն

1. Աբրահամյան Ա., ԼՂՀ քաղաքային բնակավայրերի ժողովրդագրական գործընթացների վերլուծությունը (20-րդ դարի վերջից մինչև 2015թ.), Գիտական ընթերցումներ Պրակ 1: Ստեփանակերտ, 2016, 169 էջ:
2. Արցախի կանայք և տղամարդիկ: Վիճակագրական գրքույկ: Ստեփանակերտ, 2016, 121 էջ:
3. Ժողովրդագրական իրավիճակը Լեռնային Ղարաբաղում (վիճակագրական ժողովածու): Ստեփանակերտ, 2015, 67 էջ:
4. Լեռնային Ղարաբաղը թվերով (վիճակագրական գրքույկ): Ստեփանակերտ, 2015, 107 էջ:
5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վիճակագրական տարեգիրք 2008-2014թթ., Ստեփանակերտ, 2015, 337 էջ:
6. ԼՂՀ ԱՎԾ Ժողովրդագրական ժողովածու: Ստեփանակերտ, 2017, 63 էջ:
7. Մանասյան Մ., Սուլյան Ս., Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարաբնակեցման արդի խնդիրներն ու կատարելագործման ուղիները: Կրթությունը գիտությունը Արցախում, 3-4, 2007, 165 էջ:
8. Մելքումյան Ս., Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն: Երևան, 2014, 551 էջ:
9. Պոտոսյան Ա., Գրիգորյան Ա., Լեռնային Ղարաբաղի գյուղական բնակավայրերի սոցիալ-ժողովրդագրական հիմնախնդիրները, ԱրՊՀ Գիտական տեղեկագիր (Բնագիտական): Ստեփանակերտ, 2016, 148 էջ:

Հետազոտությունն իրականացվել է ԱՀ ԿԳՄՆ կողմից տրամադրվող ֆինանսական աջակցությամբ 18AK-005 գիտական թեմայի շրջանակներում:

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, աշխ.գ.դ. Ա.Ռ. Ավագյանը:

ՀՏԴ 581.9

Բուսաբանություն

Կարինե ԲԱԼԱՅԱՆ

ԱրՊՀ կենսաբանության ամբիոն, կ.գ.թ., դոցենտ,

e-mail: balayan-karine@mail.ru

ԱՐՑԱԽԻ ՖՐԻԳԱՆՈԻԴ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Աշխատանքում ներկայացվում են 2017-2019 թթ. ընթացքում բույսերի վեգետացիայի տարբեր փուլերում Արցախի ֆրիգանոիդ (լեռնաչորասեր) բուսականության վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների և դաշտային հետազոտությունների արդյունքները: Ուսումնասիրվել են Արցախի լեռնաչորասեր բուսական ծածկույթի առանձնահատկությունները, կենսաբանական բազմազանության պահպանության հիմնախնդիրները: Արցախի տարածքում ֆրիգանային բուսականությունը բացառիկ բուսաաշխարհագրական հետաքրքրություն է ներկայացնում եթերայուղատու, գեղազարդային, ներկատու, համեմունքային և դեղատու բույսերի կազմով: Ներկայումս առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել Արցախի բուսականության պահպանության հիմնախնդիրներին, որոնք ունեն գիտական կարևոր նշանակություն:

Բանալի բառեր՝ Արցախ, ֆրիգանոիդ բուսականություն, քսերոֆիտներ, գազ մանրագլխիկ, նշենի Ֆենցլիի, ցաքի փշոտ, դժնիկ Պալլասի, հասմիկ թփային, լերդախոտ սպիտակ, նոնեա դեղին:

К.Балаян

ФРИГАНОИДНАЯ РАСТИТЕЛЬНОСТЬ АРЦАХА И ПРОБЛЕМЫ ЕЕ СОХРАНЕНИЯ

В работе представлены результаты полевых исследований и изучений в 2017-2019гг. фриганоидной (горно-ксерофитной) растительности Арцаха на разных этапах вегетации растений. Изучены особенности горно-ксерофитного растительного покрова Арцаха и проблемы сохранения биоразнообразия. Фриганоидная растительность Арцаха представляет уникальный ботанико - географический интерес по составу эфиромасличных, декоративных, красильных, пряных и лекарственных растений. В настоящее время особое внимание следует уделять проблемам сохранения растительности Арцаха, которые имеют важнейшее научное значение.

Ключевые слова: Арцах, фриганоидная растительность, ксерофиты, астрагал мелкоголовчатый, миндаль Фенцля, держидерево колючее, жостер Палласа, жасмин кустарниковый, дубровник белый, ноня желтая.

K. Balayan**FRIGANOID VEGETATION OF ARTSAKH AND THE PROBLEMS OF ITS CONSERVATION**

The work presents the results of field research and studies in 2017-2019. at different stages of vegetation of plants of friganoid (mountain - xerophytic) vegetation of Artsakh. The features of the xerophytic mountain cover of Artsakh and the problems of biodiversity conservation were studied. The freeganoid vegetation of Artsakh is of unique botanical and geographical interest in the composition of essential oil, decorative, dyeing, spicy and medicinal plants. Currently, special attention should be paid to the problems of conservation of Artsakh vegetation, which are of major scientific importance.

Keywords. *Artsakh, friganoid vegetation, xerophytes, Astragalus microcephalus, Amygdalus fenzliana, Paliurus spina-christi, Rhamnus pallasii, Jasminum fruticans, Teucrium polium, Nonea lutea.*

Ֆրիգանոիդ կամ լեռնաչորասեր բուսականությունը Հայկական լեռնաշխարհի բնորոշ տիպերից է: Տարածված է առավելապես ժայռոտ և քարքարոտ լանջերին: Լեռնաչորասեր բուսականությունն ընդգրկում է ֆրիգանա, գազուտներ և տոմիլյարներ: Ֆրիգանայի բուսական ֆորմացիաներն աչքի են ընկնում խիստ չորադիմացկունությամբ՝ քսերոֆիտությամբ: Հիմնականում տարածված են մանրատերև թփուտները, բարձիկաձև բույսերը, ինչպես նաև բազմամյա և միամյա խոտաբույսերը: Լայն տարածում ունեն փշոտ թփատեսակները, գազերը և այլն [1]:

Արցախի ֆրիգանոիդ բուսականության տարրերի ուսումնասիրության ու գիտական հետազոտությունների կատարման համար մեր կողմից իրականացվել են հետևյալ երթուղիները՝ Ստեփանակերտ – Նորաքյուղ, Ստեփանակերտ – Դրախտիկ - Ազոխ, Ստեփանակերտ – Ջրակույս, Ստեփանակերտ – Մեծ Շեն, Ստեփանակերտ - Ճարտար և այլն, որոնց ընթացքում կիրառվել են նաև հերբարիումային, գիտական գույքագրման մեթոդները: Բուսատեսակների որոշումների ժամանակ օգտագործվել են դասական որոշիչներ [2, 3, 4]:

Արցախի տարածքում ֆրիգանայի կազմում թփերից հանդիպում են Ֆենցլիի նշենին (*Amygdalus fenzliana* (Fritsch) Lipsky.), մահալեբյան բալենին (*Cerasus mahaleb* L.), ուռատերև տանձենին (*Pyrus salicifolia* Pall.), Պալլասի դժնիկը (*Rhamnus pallasii* Fisch. et C.A. Mey.), ցաքի փշոտը (*Paliurus spina-christi* Mill.), հասմիկ թփայինը (*Jasminum fruticans* L.) և այլն (*սղյուսակ 1*):

Առավել տիպիկ ֆրիգանոիդ բուսականություն Արցախի տարածքում զարգացած է մինչև 1500 մ բարձրության վրա, առավելապես հարավահայաց լանջերին: Գազուտները կամ տրագականտաթփերն իրենցից ներկայացնում են փշոտ գազերի բուսուտներ, որտեղ

դոմինանտում է գազ մանրագլխիկը (*Astragalus microcephalus* Willd.): Դրանք աճում են չոր, քարքարոտ լանջերին:

Արցախի տարածքում հանդիպում են նաև բարձիկանման բույսեր՝ Սապնարմատ (*Gypsophila*), Կորնգան (*Onobrychis*) և այլ ցեղերի ներկայացուցիչներ: Տրագականտային բուսականության կոզյակներ հանդիպում են Ասկերանի, Մարտունու, Շուշիի, Մարտակերտի, Հաղորթի և Քաշաթաղի շրջաններում:

Ֆրիգանային բուսականության մյուս ենթատիպը միջերկրածովյան տոմիլյարներն են (զանազան հոտավետ չորասեր շրթնածաղկավորներ): Արցախի տարածքում տոմիլյարային լանդշաֆտում գերիշխում է կատվախոտը (*Nepeta*), որը պատկանում է խուլեդինջազգիների ընտանիքին: Խուլեդինջազգիների ներկայացուցիչներից տարածված են նաև Ուրց սողացող (*Thymus serpyllum*), Ուրցադաղձ բարակ (*Ziziphora tenuior*), Լերդախոտ սպիտակ (*Teucriura polium*), Սաղավարտուկ արևելյան (*Scutellaria orientalis*) տեսակները, ինչպես նաև գոդորիկազգիներից՝ Օնոսմա մանրապտուղը (*Onosma microcarpum*), բակլազգիներից՝ Դորիկնիում խոտայինը (*Dorycnium herbaceum* Will.), Գազ բուրավետը (*Astragalus fragrans* Willd.) և այլն:

Բազմամյա խոտաբույսերից տարածված են Բելևալիա Ֆոմինի (*Bellevia fominii* Woronow), Աստղաշուշան նեղատերև (*Ornithogalum tenuifolium* Guss), Ա. լեռնային (*O. montanum* Cirillo), Սագասխուկ նեղատերև (*Gagea tenuifolia* (Boiss.) Fomin), Հիրիկ կոմինդրային (*Iris imbricata* Lindl.), Հ. նեղատերև (*I. lineolata* (Trautv.) Grossh.), Հ. կովկասյանը (*Juno caucasica* (Hoffm.) Klatt.), Պապլոր մանրածաղիկը (*Muscari tenuiflorum* Tausch) և մի շարք այլ տեսակներ:

Լեռնաչորասեր բուսականությունն ընդգրկում է նաև քսերոֆիլ բույսեր ունեցող խոտային բուսատեսակներ, որոնցից են Փետրախոտ Լեսսինգի (*Stipa lessingiana* Trin.), Փետրախոտ արաբական (*Stipa arabica* Trin.), Փրփրուկ սովորական (*Filipendula vulgaris* M.), Մարգարտախոտ թաուրյան (*Melica taurica* K. Koch), Մարգարտախոտ տրանսիլվանյան (*M. transsilvanica* Schur), Սիգախոտ մարգագետնային (*Phleum pratense* L.) և այլն:

Բազմամյա խոտաբույսերը ֆրիգանայում սովորաբար աչքի են ընկնում մեծ դիմացկունությամբ: Բավականին երկար արմատային համակարգի շնորհիվ նրանք հողի խոր շերտերից խոնավություն են հայթայթում և հեշտությամբ դիմանում կլիմայի խիստ չորությանը:

Աղյուսակ 1

ԱՐՅԱՆԻ ՖԻԳԱՆՈՒԴ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐԸ

Ընտանիք	Ցեղ	Տեսակ
Ադոնոքսիդներ <i>Anacardiaceae</i>	Ադոնոքս – <i>Rhus</i>	1
Աստղաձաղկազգիներ <i>Asteraceae</i>	Սինձ – <i>Tragopogon</i>	1
	Կղմուխ – <i>Inula</i>	1
	Անթառամ – <i>Helichrysum</i>	1
	Եղերդակ – <i>Cichorium</i>	1
	Հազարատերևուկ – <i>Achillea</i>	1
	Անմեռուկ – <i>Xeranthemum</i>	2
Բակլազգիներ <i>Fabaceae</i>	Գազ – <i>Astragalus</i>	2
	Դորիկնիում – <i>Dorycnium</i>	1
	Պայթակենի – <i>Colutea</i>	1
Գողտրիկազգիներ <i>Boraginaceae</i>	Նոնեա – <i>Nonea</i>	1
	Օնոսմա – <i>Onosma</i>	1
Դաշտավլուկազգիներ <i>Poaceae</i>	Այծակն – <i>Aegilops</i>	2
	Փետրախոտ – <i>Stipa</i>	3
	Կծմախոտ – <i>Botriochloa</i>	1
	Մարգարտախոտ – <i>Melica</i>	2
	Սիզախոտ – <i>Phleum</i>	1
Դժնիկազգիներ <i>Rhamnaceae</i>	Դժնիկ – <i>Rhamnus</i>	1
	Ցաքի – <i>Paliurus</i>	1
Խուլեղինջազգիներ <i>Lamiaceae</i>	Աբեղախոտ – <i>Stachys</i>	2
	Ուրց – <i>Thymus</i>	2
	Ուրցադաղձ – <i>Ziziphora</i>	1
	Կորթին – <i>Satureja</i>	2
	Լերդախոտ – <i>Teucrium</i>	2
	Կատվադաղձ – <i>Nepeta</i>	1
	Սաղավարտուկ – <i>Scutellaria</i>	1
Հիրիկազգիներ <i>Iridaceae</i>	Հիրիկ – <i>Iris</i>	2
Զիթենազգիներ <i>Oleaceae</i>	Հասմիկ – <i>Jasminum</i>	1
Շուշանազգիներ <i>Liliaceae</i>	Պապլոք – <i>Muscari</i>	1
	Աստղաշուշան – <i>Ornithogalum</i>	1
	Սագասոխուկ – <i>Gagea</i>	1
	Մկնասոխ – <i>Scilla</i>	1

Ջղախտազգիներ <i>Plantaginaceae</i>	Ջղախտ - <i>Plantago</i>	1
Սրոհունդազգիներ <i>Hypericaceae</i>	Սրոհունդ - <i>Hypericum</i>	1
Վարդազգիներ <i>Rosaceae</i>	Մասրենի – <i>Rosa</i>	2
	Բալենի – <i>Cerasus</i>	1
	Սզնի – <i>Crataegus</i>	1
	Տանձենի - <i>Pyrus</i>	1
	Չմենի – <i>Cotoneaster</i>	2
	Փրփրուկ - <i>Filipendula</i>	1
Քաջվարդազգիներ <i>Paeoniaceae</i>	Քաջվարդ – <i>Paeonia</i>	1

Ըստ աղյուսակ 1 – ի՝ Արցախի ֆրիգանոիդ բուսականության մեջ առաջատար են վարդազգիների, խուլեդինջազգիների, բակլազգիների, աստղաձաղկազգիների և դաշտավուկազգիների ընտանիքի ներկայացուցիչները: Դժնիկազգիները, գողտրիկազգիները ներկայացված են 2–ական ցեղով և 2–ական տեսակով, իսկ աղտորազգիները, ջղախտազգիները, քաջվարդազգիները և ձիթենազգիները՝ 1 ցեղով ու 1 տեսակով:

Աղյուսակ 2-ում ներկայացված տվյալներից հետևում է, որ Արցախի ֆրիգանորդ բուսականության տարրերից 20 - ը հանդիպում են վարչական բոլոր շրջանների տարածքում, 18 – ը՝ որոշ շրջաններում, իսկ Քաջվարդ նեղատերևը՝ միայն Ասկերանի շրջանի Նորագյուղ համայնքի մերձակա տարածքում:

Աղյուսակ 2

ԼԵՌՆԱՉՈՐԱՍԵՐ ԲՈՒՍԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՑԱՒՈՒՄ ԵՎ ՆՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

N	Տեսակների անվանումը	Տարածվածությունն ըստ վարչական շրջանների	Նշանակությունը
1.	Գազ մանրագլխիկ <i>Astragalus microcephalus</i>	Բոլոր շրջաններում	Դեղատու
2.	Դժնիկ Պալլասի <i>Rhamnus pallasii</i>	Բոլոր շրջաններում	Գեղազարդիչ
3.	Ցաքի փշոտ <i>Paliurus spina - christi</i>	Բոլոր շրջաններում	Դեղատու
4.	Հասմիկ թփային <i>Jasminum fruticans</i>	Բոլոր շրջաններում	Գեղազարդիչ
5.	Տանձենի ուռատերև <i>Pyrus salicifolia</i>	Ասկերան, Մարտակերտ,	Դեղատու, վայրի պտղատու

		Մարտունի	
6.	Աղտոր դաբաղային <i>Rhus coriaria</i>	Մարտունի, Ասկերան, Մարտակերտ	Դեղատու, տեխնիկական, համեմունքային
7.	Սզնի Շովիցի <i>Crataegus szovitsii</i>	Հաղրուք, Մարտակերտ, Ասկերան, Շուշի	Դեղատու, վայրի պտղատու
8.	Մաարենի վրացական <i>Rosa iberica</i>	Բոլոր շրջաններում	Դեղատու, վայրի պտղատու
9.	Բալենի մահալեբյան <i>Cerasus mahaleb</i>	Մարտակերտ, Շուշի, Հաղրուք, Ասկերան	Դեղատու
10.	Նշենի Ֆենցլիի <i>Amygdalus fenzliana</i>	Ասկերան, Քաշաթաղ, Մարտակերտ, Հաղրուք	Դեղատու, սննդային
11.	Պայթակենի արևելյան <i>Colutea orientalis</i>	Ասկերան, Շուշի, Հաղրուք, Մարտակերտ	Գեղազարդիչ
12.	Սրոհունդ սովորական (արևքուրիկ) <i>Hypericum perforatum</i>	Բոլոր շրջաններում	Դեղատու
13.	Սաղավարտուկ արևելյան <i>Scutellaria orientalis</i>	Բոլոր շրջաններում	Գեղազարդիչ, դեղատու
14.	Կատվադաղձ Մեյերի <i>Nepeta Meyeri</i>	Բոլոր շրջաններում	Գեղազարդիչ
15.	Խնկածաղիկ սովորական <i>Origanum vulgare</i>	Բոլոր շրջաններում	Դեղատու, համեմունքային
16.	Լեդդախոտ սպիտակ <i>Teucrium polium</i>	Բոլոր շրջաններում	Դեղատու
17.	Ուրբոս սողացող <i>Thymus serpyllum</i>	Բոլոր շրջաններում	Դեղատու, համեմունքային
18.	Զղախոտ նշտարատերև <i>Plantago lanceolata</i>	Բոլոր շրջաններում	Դեղատու

19.	Հիրիկ ցանցավոր <i>Iris reticulata</i>	Հաղրութ, Ասկերան, Մարտակերտ, Քաշաթաղ	Գեղազարդիչ, դեղատու, երթերայուղատու
20.	Հիրիկ կովկասյան <i>Iris caucasica</i>	Շահումյան, Մարտակերտ, Ասկերան, Հաղրութ	Գեղազարդիչ, դեղատու, երթերայուղատու
21.	Շրեշ ուշագրավ <i>Eremurus spectabilis</i>	Մարտունի, Հաղրութ, Մարտակերտ, Ասկերան	Դեղատու, սննդային, գեղազարդիչ
22.	Շտերնբերգիա Ֆիշերի <i>Sternbergia Fischeriana</i>	Բոլոր շրջաններում	Գեղազարդիչ
23.	Պապլոր մանրածաղիկ <i>Muscari tenuiflorum</i>	Ասկերան, Մարտակերտ, Շուշի	Գեղազարդիչ
24.	Սինձ արևելյան <i>Tragopogon orientalis</i>	Հաղրութ, Շուշի, Քաշաթաղ	Դեղատու, սննդային
25.	Կոմուխ բրիտանական <i>Inula Britannica</i>	Բոլոր շրջաններում	Դեղատու
26.	Անթառամ հայկական <i>Helichrysum armenium</i>	Ասկերան, Հաղրութ	Դեղատու, համեմունքային
27.	Եղերդակ սովորական <i>Cichorium intybus</i>	Բոլոր շրջաններում	Դեղատու, սննդային
28.	Հազարատերևուկ սովորական <i>Achillea millefolium</i>	Բոլոր շրջաններում	Դեղատու
29.	Անմեռուկ չոված <i>Xeranthemum squarrosum</i>	Բոլոր շրջաններում	Դեղատու
30.	Անմեռուկ գլանաձև <i>Xeranthemum cylindraceum</i>	Բոլոր շրջաններում	Դեղատու
31.	Սագասոխուկ դեղին <i>Gagea lutea</i>	Ասկերան, Մարտակերտ, Շուշի	Գեղազարդիչ
32.	Աստղաշուշան	Շուշի, Քաշաթաղ,	Դեղատու,

	հայկական <i>Ornithogalum armenum</i>	Հաղորութ	Սննդային
33.	Մկնաստի սիբիրյան <i>Scilla sibirica</i>	Բոլոր շրջաններում	Գեղազարդիչ
34.	Նոնեա դեղին <i>Nonea lutea</i>	Մարտունի, Մարտակերտ, Հաղորութ, Ասկերան	Դեղատու, սննդային
35.	Օնոսմա մանրապտուղ <i>Onosma microcarpum</i>	Հաղորութ, Շուշի, Ասկերան, Շահումյան	Գեղազարդիչ
36.	Փրփրուկ սովորական <i>Filipendula vulgaris</i>	Բոլոր շրջաններում	Գեղազարդիչ, դեղատու
37.	Չմենի ամբողջաեզր <i>Cotoneaster integerrimus</i>	Մարտակերտ, Ասկերան, Շուշի	Գեղազարդիչ, դեղատու
38.	Խնկենի բթատերև <i>Pistacia atlantica</i>	Մարտակերտ, Ասկերան, Շուշի	Գեղազարդիչ, դեղատու
39.	Քաջվարդ նեղատերև <i>Paeonia tenuifolia</i>	Ասկերան	Գեղազարդիչ, դեղատու

Վերջին տարիներին կլիմայի ընդհանուր տաքացման, ինչպես նաև անտառների արհեստական նոսրացման հետևանքով ի հայտ են եկել բազմաթիվ վնասակար գործոններ, որոնց թվում առավել վտանգավոր են հիվանդությունների հարուցիչները, հրդեհների ավելացումը:

Արցախի տարածքում մեր կողմից կատարված գիտական հետազոտությունների արդյունքում բացահայտվել է, որ Խնկենի բթատերև - *Pistacia atlantica* Desf. subsp. *mutica* Fisch. տեսակի և Մասրենի - *Rosa* ցեղի ներկայացուցիչների մեծամասնությունը վարակված են գալլերով, որոնք հիմնականում վնասում են նշված բույսերի պտուղները:

Արցախի ֆրիգանոիդ բուսականության պահպանության, վերարտադրության և օգտագործման համար պետք է մշակել և իրականացնել գիտականորեն հիմնավորված հատուկ միջոցառումներ, դրսևորել բնության պահպանի վարքագիծ՝ ներկայիս ու ապագայի սերունդների համար, ինչպես նաև իրազեկ պահել մեր բնակչությանը հազվագյուտ հանդիպող, անհետացման եզրին գտնվող բուսատեսակների մասին:

Գրականություն

1. Գասպարյան Ա. Գ., Կենսաաշխարհագրություն, Երևան, 2005, էջ 266:
2. Վարդանյան Ժ. Հ., Ծառագիտություն, Երևան, 2005, 370 էջ:
3. Гроссгейм А. А., 1939-1967. Флора Кавказа. Баку. М-Л: Азфан, Т.1-7.
4. Флора Армении. 1954 – 2009. Ереван. АН Арм. ССР. Т. 1 - 11.

Նոդիաժը տպագրության է նրաշխարհը խմբագրական կոլեկտիվի անդամ, կ.գ.դ. Հ. Գ. Գալստյանը:

ՀՏԴ 612.821Հոգեֆիզիոլոգիա**Հասմիկ ԳԱԼՍՅԱՆ,****կ.գ.դ., ԱրՊՀ կենս. ամբիոնի դոցենտ****e-mail: ghg77@mail.ru****Մարիամ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ,****ԱրՊՀ կենսաբանության ամբիոնի մագիստրոս****e-mail: mariam.ru96@mail.ru****Արտյոմ ՍԱՀԱԿՅԱՆ,****ԱրՊՀ կենսաբանության ամբիոնի մագիստրոս****e-mail: art.sahak.85@mail.ru**

ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՄՈՏ

Հորվածում ներկայացված են ժամանակակից պատկերացումներ համակարգչային կախվածության մասին: Հատուկ ուշադրություն է դարձվում տվյալ ֆենոմենի ուսումնասիրությանը սովորողների շրջանում, որոնք, ըստ սերունդների տեսության պատկանում են թվային սերունդին: Էլեկտրասարտագրության մեթոդով ցույց է տրվում համակարգչային խաղերի ազդեցությունը սիրտ-անոթային համակարգի ֆունկցիոնալ վիճակի վրա: Հոգեբանական թեստերի կիրառմամբ բացահայտվել է նաև հետազոտվողների հոգեֆիզիոլոգիական վիճակը:

Բանալի բառեր՝ համակարգչային կախվածություն, սովորողներ, թվային սերունդ, սերունդների տեսություն, համակարգչային խաղեր, էլեկտրասարտագրություն:

А.Галстян

ИССЛЕДОВАНИЕ КОМПЬЮТЕРНОЙ ЗАВИСИМОСТИ У УЧАЩИХСЯ

В статье представлены современные представления о компьютерной зависимости. Особое внимание уделяется изучению данного феномена среди учащихся, которые, согласно теории поколений, относятся к цифровому поколению. Электрокардиографическим методом показано влияние компьютерных игр на функциональное состояние сердечно-сосудистой системы. С помощью психологических тестов было также выявлено психофизиологическое состояние обследуемых.

Ключевые слова: компьютерная зависимость, учащиеся, цифровое поколение, теория поколений, компьютерные игры, электрокардиограмма

Н. Galstyan

THE STUDY OF COMPUTER ADDICTION AMONG STUDENTS

The article presents contemporary conceptions about computer addiction.

Special attention is paid to the study of this phenomenon among students who belong to the digital generation according to the theory of generations. The effect of computer games on the functional state of the cardiovascular system is shown by electrocardiographic method. Subjects' psychophysiological status has been also detected by the use of psychological tests.

Keywords. computer addiction, students, digital generation, generation theory, computer games, electrocardiogram.

Համակարգչային տեխնիկայի դրական արժեքի հետ մեկտեղ հատուկ ուշադրության են արժանի դրա օգտագործման բացասական հետևանքները, որոնք ազդում են մարդու առողջության վրա՝ մասնավորապես առաջացնելով համակարգչային կախվածություն: Վերջինս նյարդա-հոգեբանական խանգարում է, որը կապված է համակարգիչների հետ (անհատական համակարգիչներ, սմարթֆոններ, պլանշետներ) երկարատև աշխատելիս ուղեղի բնականոն ֆունկցիոնալ գործունեության խախտման հետ: Այնուամենայնիվ, համակարգչային կախվածության ախտորոշմանը նվիրված աշխատանքները սակավ են: Ավելին, «համակարգչային կախվածություն» և «կախվածություն ինտերնետից» տերմինները դեռ լիովին ստանդարտացված չեն և պահանջում են էական ուսումնասիրություն ու նկարագրություն՝ հաշվի առնելով համակարգչային գրագիտության ժամանակակից հասկացությունները: Բացի այդ՝ համակարգչային կախվածությունը ախտորոշելու համար մշակված համընդհանուր մեթոդիկա նույնպես բացակայում է. որպես կանոն, ախտորոշման մեթոդները հարցաթերթիկներ են, որոնց արդյունքները պետք է ենթարկվեն որակական վերլուծության:

Խաղային կախվածությունը համակարգչային կախվածության ենթադրյալ ձև է, որը դրսևորվում է տեսախաղերի և համակարգչային խաղերի մոլուցքում: 1983 թվականին Բարլոու Սոուպերը և Մարկ Միլլերը՝ Լուիզիանայի տեխնիկական համալսարանի գիտնականները առաջին անգամ նկարագրեցին կախվածությունը Pac-Man խաղով՝ նմանեցնելով այն հոգեակտիվ նյութերից կախվածությանը [1]: Մի շարք գիտնականներ կարծում են, որ դրանք կախվածություն են առաջացնում ալկոհոլին և թմրամիջոցներին հավասար [2]: Հայտնի են դեպքեր, երբ չափազանց երկար խաղը բերել է ճակատագրական հետևանքների՝ մահացու ելքով [3]: 2018 թվականի հունիսին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը խաղային հիվանդությունը մտցրել է հիվանդությունների միջազգային դասակարգման 11-րդ տարբերակում, որը նախատեսվում է ուժի մեջ մտնել 2022 թվականի հունվարի 1-ից [4]:

Ինտերնետային կախվածությունը համացանցից օգտվելու մոլուցքային ձգտումն է և դրա չափազանց մեծ օգտագործումը, ցանցում շատ ժամանակ

գտնվելը: Ըստ տարբեր ուսումնասիրությունների՝ այսօր ամբողջ աշխարհում օգտագործողների մոտ 10%-ը կախված է համացանցից: Ինտերնետային կախվածությունը բժշկական չափանիշներով դեռ հոգեկան խանգարում չէ, սակայն այս հիմնախնդիրը ուշադրության կենտրոնում է գտնվում արդեն աշխարհի շատ երկրներում: Այսպես, Ֆինլանդիայում երիտասարդներին բանակ զորակոչվելիս հաշվի են առնում նաև համացանցային կախվածությունը [5]: Չինաստանը 2008 թվականին հայտարարեց, որ պատրաստվում է առաջինն աշխարհում պաշտոնապես ճանաչել այդ կախվածությունը որպես հիվանդություն և առաջինը սկսեց բացել համապատասխան կլինիկաները, սակայն նշվում է դեռահաս հիվանդների բուժման անընդունելի մեթոդների կիրառումը [6]: 2009-ին ԱՄՆ-ում բացվեց առաջին կլինիկան, որը զբաղվում է «ինտերնետային կախվածության» բուժմամբ [7]:

Կապված աճող օրգանիզմում ընթացող բարդ կառուցվածքագործառական փոփոխությունների հետ [8]՝ երեխաները, դեռահասները և պատանիներն ավելի են զգայուն թվային տեխնոլոգիաների անբարենպաստ ազդեցության նկատմամբ: Ներկայիս կրթական գործընթացի մասնակիցները պատկանում են այսպես կոչված թվային սերունդին: Դժվար է խոսել այս սերնդի առանձնահատկությունների և վարքագծային կարծրատիպերի մասին, քանի որ դրանք ծնվել է 2000-ից մինչ օրս ընկած ժամանակահատվածում (0-19 տարեկաններ՝ երեխաներ, դեռահասներ և պատանիներ): Ելնելով սերնդի տեսությունից՝ կարելի է ենթադրել, որ այս սերունդը պարփակված է՝ պաշտպանելով իրեն արտաքին միջավայրից, ապաստան գտնելով, սակայն ոչ թե ընտանիքում կամ գրականությունում, այլ վիրտուալ իրականության մեջ, ինչը, իհարկե, համապատասխանում է ժամանակի առանձնահատկություններին [9]:

Վերը նշված հիմնախնդրի խորը վերլուծությունը և Արցախում նման հետազոտությունների բացակայությունը հիմք հանդիսացան մեր տարածաշրջանում որոշ ուսումնասիրություններ իրականացնելու համար: 2018-2019 ուս. տարվա ընթացքում մեր կողմից կատարվել են սովորողների համակարգչային կախվածության վիճակը բնութագրող հետազոտություններ: Հետազոտվել է 1-12-րդ դասարանների 120 /յուրաքանչյուր դասարանից 10 տղա և 10 աղջիկ/ աշակերտ: Կրտսեր դասարանների հարցման թերթիկների լրացմանը մասնակցել են նաև ծնողները: Համակարգչային կախվածությունը սովորողների մոտ ուսումնասիրվել է հատուկ թեստի օգնությամբ [10]: Արդյունքները վերլուծվել են ըստ միավորների գումարի. 0-14 միավոր՝ համակարգչային կախվածության վտանգ չկա, 15-20 միավոր՝ տարված են համակարգչով, 21-26 միավոր՝ համակարգչային կախվածության վտանգը մեծ է, 27-32 միավոր՝ առկա է համակարգչային կախվածություն: Հետազոտության արդյունքները ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1

Համակարգչային կախվածության տվյալները դպրոցականների մոտ

Դասարան		0-14 միավոր		15-20 միավոր		20-26 միավոր		26-32 միավոր	
		թիվը	%	թիվը	%	թիվը	%	թիվը	%
I	Տղա	4	40	6	60	—	—	—	—
	Աղջիկ	8	80	2	20	—	—	—	—
II	Տղա	6	60	4	40	—	—	—	—
	Աղջիկ	8	80	2	20	—	—	—	—
III	Տղա	6	60	4	40	—	—	—	—
	Աղջիկ	2	20	8	80	—	—	—	—
IV	Տղա	3	30	6	60	1	10	—	—
	Աղջիկ	6	60	4	40	-	-	—	-
V	Տղա	1	10	8	80	1	10	—	—
	Աղջիկ	4	40	6	60	—	—	—	—
VI	Տղա	2	20	4	40	4	40	—	—
	Աղջիկ	5	50	3	30	2	20	—	—
VII	Տղա	—	—	6	60	3	30	1	10
	Աղջիկ	2	20	4	40	4	40	—	—
VII I	Տղա	1	10	4	40	5	50	—	—
	Աղջիկ	2	20	4	40	4	40	-	-
IX	Տղա	—	—	7	70	3	30	—	—
	Աղջիկ	3	30	5	50	2	20	—	—
X	Տղա	—	—	7	70	2	20	1	10
	Աղջիկ	2	20	5	50	3	30	—	—
XI	Տղա	—	—	3	30	7	70	—	—
	Աղջիկ	1	10	5	50	4	40	—	—
XII	Տղա	—	—	3	30	5	50	2	20
	Աղջիկ	2	20	2	20	6	60	—	—

Ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ կրտսեր դասարանների աշակերտների մոտ համակարգչային կախվածության վտանգ չկա, հիմնականում նրանք տարված են համակարգչով: IV-VI դասարաններում աշակերտների մոտ համակարգչային կախվածության վտանգը մեծանում է: Իսկ VII-XII դասարաններում տղաների մոտ արդեն դիտվում է համակարգչային կախվածություն:

Հետազոտության երկրորդ փուլում ուսումնասիրվել է մի խումբ սովորողների՝ համակարգչային խաղերի ազդեցությամբ անձնային և


իրավիճակային տազնապայնության փոփոխությունն ըստ Սպիլբերգեր-Խանինի [11], ինչպես նաև ինքնազգացողության, ակտիվության և տրամադրության փոփոխությունն՝ ըստ ԻՍՏ-հարցաթերթիկի [11]: Տազնապայնության արդյունքները գնահատվել են հետևյալ սկզբունքով՝ մինչև 30 միավոր՝ ցածր տազնապայնություն, 31-45՝ չափավոր, 46 և ավելի՝ բարձր տազնապայնություն: Ինքնազգացողությունը, ակտիվությունը և տրամադրությունը որոշվել են համապատասխան ձևով. 1-4 միավոր՝ ցածր (անբավարար) մակարդակ, 4-5 միավոր՝ նվազագույն թույլատրելի (բավարար), 5-5.5 միավոր՝ օպտիմալ, 5.5-6 միավոր՝ բարձր և 6-7 միավոր՝ շատ բարձր մակարդակ:

Իրավիճակային և անձնային տազնապայնության հետազոտության արդյունքների վերլուծությունը վկայում է բոլոր սովորողների մոտ նշված ցուցանիշների բարձրացման մասին: Այսպես, իրավիճակային տազնապայնությունը 38.8 միավորից ավելացել է մինչև 47.0 միավոր, իսկ անձնային տազնապայնության ցուցանիշները՝ համապատասխանաբար 41.4-ից 48.8 միավոր, այսինքն՝ չափավորից անցնելով բարձր ցուցանիշների: Հատկանշական է, որ սովորողների հետազոտված խմբում անձնային տազնապայնության ելակետային ցուցանիշները գերազանցում էին իրավիճակային տազնապայնության մեծությունները:


Ինքնազգացողության, ակտիվության և տրամադրության հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ առաջինի մեծությունը համակարգչային խաղերի ազդեցությամբ 4.9-ից նվազել է մինչև 4.2 միավոր (վիճակի բավարար մակարդակ), ակտիվությունը չի փոխվել՝ կազմելով 4.7 միավոր (բավարար), իսկ տրամադրության արժեքը նույնպես նվազել է 5.5-ից մինչև 4.6 միավոր (օպտիմալից դառնալով բավարար): Կարելի է ենթադրել, որ սովորողների հոգեկան վիճակի ինքնազնադատումը բացահայտեց նրա՝ օպտիմալից ցածր մակարդակի վրա գտնվելու փաստը, որը մասամբ էլ ավելի է իջնում համակարգչային խաղերի ազդեցությամբ:

Հետազոտության վերջին փուլում ԱրՊՀ կենսաբանության լաբորատորիայի դյուրատար էլեկտրասրտագրիչի կիրառմամբ Արցախում առաջին անգամ իրականացվել է մի խումբ հետազոտվողների էլեկտրասրտագրային հետազոտություն (ԷՍԳ) [12]՝ մինչև համակարգչային խաղերը և խաղից հետո: Ստորև ներկայացված են իրականացված ԷՍԳ-հետազոտության որոշ տվյալներ (նկ. 1-2, աղյուսակ 2):

Նկար 1-ում պատկերված են 12 տարեկան տղա սովորողի ԷՍԳ-ի 5-րոպեանոց գրանցումը, կարդիոինտերվալների տատանասահմանի (mV) ու տևողության (sec.) չափանիշները մինչև համակարգչային խաղը և խաղից հետո: Սովորողների մոտ համակարգչային խաղերի ազդեցությամբ տեղի են ունեցել ԷՍԳ-ի տատանասահմանի և կարդիոինտերվալների տևողության որոշակի փոփոխություններ:



մինչև խաղը




խաղից հետո

Նկ .1. 12 տարեկան սովորողի էլեկտրասրտագրային փոփոխությունները համակարգչային խաղի ազդեցությամբ:

Այս մեթոդն ապահովում է R-R կարդիոինտերվալների գրանցումն ու վերլուծությունը տարբեր իրավիճակներում: Հնարավորություն է ընձեռվում ուսումնասիրելու հետազոտվողի սրտային ռիթմը, նրա կարգավորման աստիճանը, գաղափար կազմելու վեգետատիվ նյարդային համակարգի պարասիմպաթիկ և սիմպաթիկ բաժինների լարվածության մասին:

Գրանցման արդյունքում ստացվում են սրտի ռիթմի հիմնական չափանիշներ. Mo – մոդան (վրկ), AMo – մոդայի տատանասահմանը՝ հանդիպման հաճախությունը (%-ով), ΔX – վիճակագրական տատանման մեծությունը՝ կարդիոինտերվալների փոփոխականության աստիճանը (վրկ), որոնց մեծությունները արտացոլվում են հիստոգրերում (նկ.2):



Նկ. 2. 11, 12 և 13 տարեկան սովորողների հիստոգրային փոփոխությունները համակարգչային խաղի ազդեցությամբ:

Mo, AMo, ΔX-ի հիման վրա որոշվում են սրտի ռիթմի ինտեգրային ցուցանիշները. լարվածության ցուցիչ՝ L3 (IN), վեգետատիվ հավասարակշռության ցուցիչ՝ ՎՀՑ (IVR), ռիթմի վեգետատիվ ցուցիչ՝ ՌՎՑ (VPR), կարգավորման գործընթացների համապատասխանության ցուցիչ՝ ԿԳՀՑ (PAPR): Հետազոտության արդյունքներում առանձնացրել ենք 3 տիպի տարբեր իրավիճակներ (աղյուսակ 2).

- երբ սրտի կծկումների հաճախականությունը մեծանում է (11 տարեկան տղա),
- սրտի կծկումների հաճախականությունը մնում է անփոփոխ (12 տարեկան տղա),
- սրտի կծկումների հաճախականությունը նվազում է (13 տարեկան տղա):

Ինչպես երևում է աղյուսակ 2-ից, բոլոր 3 դեպքերում, անգամ սրտի կծկումների հաճախականությունը (Heart Rate Mean) անփոփոխ մնալու պարագայում (12 տարեկանի մոտ), սրտի ռիթմի հիմնական ցուցանիշներն ու ինտեգրատիվ չափանիշները համակարգչային խաղերի ազդեցությամբ որոշակի փոփոխության են ենթարկվել:

Աղյուսակ 2

11, 12 և 13 տարեկան սովորողների սրտի ինտեգրատիվ չափանիշների փոփոխությունները համակարգչային խաղի ազդեցությամբ

11 տարեկան	12 տարեկան	13 տարեկան
մինչև խաղը		
Heart Rate Mean 92 bpm	Heart Rate Mean 100 bpm	Heart Rate Mean 81 bpm
Mo (sec) 0.63735	Mo (sec) 0.57483	Mo (sec) 0.77121
AMo (%) 54	AMo (%) 57.5758	AMo (%) 29.4118
CV_% 5.53214	CV_% 5.59451	CV_% 9.14261
PAPR 84.7246	PAPR 100.161	PAPR 38.1372
IVR 258.511	IVR 267.559	IVR 74.1782
VPR 7.51106	VPR 8.0842	VPR 3.27027
IN 202.799	IN 232.727	IN 48.0921
խաղից հետո		
Heart Rate Mean 98 bpm	Heart Rate Mean 100 bpm	Heart Rate Mean 79 bpm
Mo (sec) 0.62102	Mo (sec) 0.61001	Mo (sec) 0.73179
AMo (%) 61	AMo (%) 49	AMo (%) 24
CV_% 5.59153	CV_% 5.68348	CV_% 9.03039
PAPR 98.2251	PAPR 80.3256	PAPR 32.7962
IVR 286.528	IVR 239.125	IVR 70.9389
VPR 7.56363	VPR 7.99992	VPR 4.03911
IN 230.691	IN 195.998	IN 48.4693

Հետազոտության ընթացքում ստացված տվյալները վկայում են սովորողների մոտ համակարգչային կախվածության առկայության, ինչպես նաև համակարգչային խաղերի ազդեցությամբ հոգեհուզական վիճակի և սրտի ռիթմի որոշ փոփոխության մասին, որը, սակայն, միանշանակ բնույթի չէ և թելադրում է հիմնախնդրի հետագա մշակման

անհրաժեշտությունը: Սույն աշխատանքը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ինչպես գիտական, այնպես էլ գործնական առումներով և կարող է հիմք հանդիսանալ տարածաշրջանում հետագա ուսումնասիրությունների համար: Կանխարգելիչ միջոցառումների մշակումը կնպաստի թվային տեխնոլոգիաների անբարենպաստ ազդեցությունների նվազեցմանը:

Գրականություն

1. Soper, W. Barlow, and Mark J. Miller. Junk-Time Junkies: An Emerging Addiction Among Students. The School Counselor, 1983, T. 31, № 1.
2. Иванов М. Психологические аспекты негативного влияния игровой компьютерной зависимости на личность человека. Флогитсон. Flogiston.ru, 1999, том 20, №1, с 86-102.
3. Китайской геймерше устроили виртуальные похороны. SecurityLab
4. Редакция ПМ. ВОЗ признала зависимость от видеоигр болезнью (рус.). Популярная механика, 19 июня, 2018.
5. Тезисы дистантных зарубежных участников симпозиума «Интернет-зависимость: психологическая природа и динамика развития», 10 июня 2009 г.
6. Одержимые интернетом: Китайская история, <https://habr.com/ru/post/81072/>
7. В США появилась первая клиника для лечения интернетзависимости, <https://www.forumdaily.com>.
8. Գալստյան Հ.Գ., Մինասյան Ս.Մ., Աղամյան Մ.Ի., Տարիքային ֆիզիոլոգիա. Ուսումնամեթոդական ձեռնարկ, Երևան, 2019, 72 էջ:
9. Ядов В.А., Магун В.С., Семенова В.В., Левада Ю.А., Шанин Т., Дубин Б., Данилов В., Олейников Д., Энговатов М.В., Отцы и дети. Поколенческий анализ современной России. М.: Новое литературное обозрение, 328 с.
10. Գաալարյան Խ.Վ., Արդյո՞ք համակարգչային կախվածությունը հիվանդություն է: Առողջապահություն, <https://www.dasaran.am/apps/wiki/view/id/6750->
11. Ագալյան Ն.Գ., Ավետիսյան Բ.Ս., Առաքելյան Տ.Ա. և ուր. Բժշկական հոգեբանություն, ուսումնական ձեռնարկ: Երևան, 2015, 341 էջ:
12. Баевский Р. М., Иванов Г. Г., Чирейкин Л. В. и соавт. Анализ variability сердечного ритма при использовании различных электрокардиографических систем (методические рекомендации). Вестник аритмологии, 2001, 24, с. 65-87.

Հոդվածը տպագրված է «Կենսաբանության արդիականացումն Արցախում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում

Հոդվածը տպագրության է նրաշխարհը խմբագրական կոլեկիայի անդամ, կ.գ.դ. Հ. Գ. Գալստյանը:

ՀՏԴ 579.61

Բժշկական մանրէաբանություն

Հասմիկ ԳԱԼՍՅԱՆ,

կ.գ.դ., ԱրՊՀ կենս. ամբիոնի դոցենտ

e-mail: ghg77@mail.ru

Իվետա ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՀ ԱՆ ՀԲԿ բակտերիոլոգիական լաբորատորիայի վարիչ

e-mail: iveta.stepanyan.1976@mail.ru

Արփինե ՅԱՐԱՄԻՇՅԱՆ

ԱրՊՀ մագ.2-րդ կուրսի ուսանողուհի

e-mail: yaramishyan.arpine@mail.ru

ԱՂԻՔԱՅԻՆ ՑՈՒՊԻԿԻ ԶԳԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հակաբիոտիկներն օժտված են բակտերիաների տարբեր տեսակների աճն ու բազմացումն ընկճող կամ դրանք ոչնչացնող հատկություններով: Սակայն ժամանակի ընթացքում նրանք ձեռք են բերել կայունություն որոշակի հակաբիոտիկների նկատմամբ և նույնիսկ ի հայտ են եկել այնպիսի շտամներ, որոնց վրա հակաբիոտիկներն այլևս ազդեցություն չեն ունենում: Սույն աշխատանքում նկարագրվում է լաբորատոր պայմաններում հակաբիոտիկների հանդեպ ադիքային ցուպիկի զգայունության որոշման մեթոդը:

Բանալի բառեր` հակաբիոտիկներ, ադիքային ցուպիկ, զգայունություն, միկրոօրգանիզմներ, մուտացիա, բակտերիաներ, սկավառակադիֆուզիոն մեթոդ:

А.Галстян

ОПРЕДЕЛЕНИЕ ЧУВСТВИТЕЛЬНОСТИ КИШЕЧНОЙ ПАЛОЧКИ К АНТИБИОТИКАМ

Антибиотики обладают способностью подавления роста и размножения различных видов бактерий или их уничтожения. Однако со временем бактерии приобрели устойчивость к определенным антибиотикам и даже появились штаммы, на которых антибиотики уже не действуют. В данной работе описывается метод определения восприимчивости кишечной палочки к антибиотикам в лабораторных условиях.

Ключевые слова: антибиотики, кишечная палочка, чувствительность, микроорганизмы, мутация, бактерии, диско-диффузионный метод.

H. Galstyan**SUSCEPTIBILITY DETERMINATION OF THE E. COLI TO THE ANTIBIOTICS**

Antibiotics have the ability to suppress different bacteria's growth and development or just kill them. But over time, they have become resistant to certain antibiotics and emerged even some type of strains which haven't been exposed by the antibiotic's influence. In this work have been described the method of determining the susceptibility of E. coli to antibiotics in laboratory conditions.

Keywords: antibiotics, E.coli, intestinal tract, susceptibility, microorganisms, mutation, bacteria, disk diffusion method.

Մասնագետները նկատել են, որ վերջին տարիներին ամբողջ աշխարհում, այդ թվում՝ Հայաստանում և Արցախում, մեծ տարածում են գտել բակտերիաների կողմից առաջացած հիվանդությունները, ուստի մարդկանց առողջության պահպանման և կյանքի որակի բարելավման տեսակետից չափազանց կարևոր է կանխարգելել դրանք կամ գտնել բուժման արդյունավետ միջոցներ: Բակտերիաների կողմից հարուցված հիվանդությունների դեմ պայքարի եղանակները սակավ են, և առայսօր սահմանափակվում են միայն հակաբիոտիկների կիրառմամբ: Աղիքային ցուպիկի զգայունության աստիճանի որոշումը կիրառվող հակաբիոտիկների նկատմամբ խիստ կարևոր և արդիական է բժշկության ոլորտում, քանի որ ունենալով այդ տվյալները, հնարավոր կլինի հակաբիոտիկների մեծ բազմազանության մեջ ընտրել նրանց այն խմբերը, որոնք բարձր արդյունավետությամբ կներագդեն աղիքային ցուպիկի վրա՝ դրանով իսկ հնարավորություն տալով բարձր էֆեկտիվությամբ բուժելու նրա կողմից հարուցված հիվանդությունները և բարելավելու առողջության վիճակը:

Աղիքային ցուպիկը բակտերիաների ընդարձակ խումբ է, որոնք իրարից տարբերվում են անտիգենային, կենսաքիմիական հատկանիշներով և կազմում են մարդու աղիների նորմալ միկրոֆլորան: Աղիքային ցուպիկ (լատ. *Excherichia coli*, *E. coli*) ցեղային անվանումը կապված է հայտնաբերողի՝ Էշերիխի անվան հետ: Նորմալ պայմաններում ախտածին չէ, մորֆոլոգիապես նման է դիզենթերիայի հարուցիչին, սակայն պրոտեոլիտիկ ֆերմենտ չի արտադրում և աղիքի պատի մեջ չի թափանցում, իսկ այլ կլանված էրիթրոցիտները նրա պրոտոպլազմայում երբեք չեն նկատվում: Աղիքային ցուպիկի թունավոր շտամները կարող են առաջացնել տարբեր հիվանդություններ, ինչպիսին են՝ գաստրոէնտերիտ, միզուղիների վարակներ, մենինգիտ, դիզբակտերիոզ, աղիքային վարակներ և այլն: Ավելի հազվադեպ առաջացնում են հեմոլիտիկ-ուրեմիկ համախտանիշ, պերիտոնիտ, մաստիտ և գրամ-բացասական թոքաբորբ [1]: Աղիքային ցուպիկը շարժուն, գրամ բացասական, ուղիղ ցուպիկանման բակտերիա է, որը տեղակայվում է գույգերով: Աղիքային ցուպիկի կենսաքիմիական ակտիվությունն արտահայտված է ցայտուն, քայքայում է

գլյուկոզը, լակտոզը, մաննիտն ու մալթոզը՝ առաջացնելով թթու և գազ, ախտորոշիչ-տարբերակիչ միջավայրերում, լակտոզը քայքայելու պատճառով, առաջացնում գունավոր գաղութներ, սպիտակուցների քայքայումից՝ ինդոլ և ծծմբաջրածին: Աղիքային ցուպիկի նշանակությունը և դերը մեծ է, այն ունի անտագոնիստական հատկություններ աղիքային խմբի ախտածին տեսակների հանդեպ:

Աղիքային ցուպիկով հարուցված հիվանդությունները բուժվում են հակաբիոտիկներով: Վերջիններս միկրոօրգանիզմների կենսագործունեությունից առաջացած, ինչպես նաև բուսական և կենդանական բջիջներից ստացված օրգանական նյութեր են, որոնք օժտված են մանրէների տարբեր տեսակների աճն ու բազմացումն ընկճող կամ դրանց ոչնչացնող հատկություններով: Դեռևս 15-16-րդ դդ. ժողովրդական բժշկության մեջ թարախային վերքերի բուժման համար օգտագործվել է կանաչ բորբոսը: Հակաբիոտիկների ստացման հիմնական աղբյուրներն են մանրադիտակային սնկիկների և մանրէների որոշ տեսակներ, որոնցից անջատվել են մի քանի հազար հակաբիոտիկային նյութեր: Սակայն մեծ մասամբ դրանք թունավոր ազդեցություն էին թողնում ոչ միայն հիվանդությունների հարուցիչների, այլև մարդու օրգանիզմի վրա: Ուստի որպես դեղանյութ օգտագործում են միայն այն հակաբիոտիկները, որոնք ունեն հակամանրէային բարձր ակտիվություն, կենսաբանական միջավայրում կայուն են և մարդու օրգանիզմի համար՝ քիչ թունավոր: Դրանք պենիցիլինի, ստրեպտոմիցինի, տետրացիկլինի, լևոմիցետինի, օլետանդոմիցինի և այլ խմբի պատրաստուկներն են [2]: Աղիքային ցուպիկի նկատմամբ առավել ակտիվ են հետևյալ հակաբիոտիկների տեսակները՝ ամոկսիցիլին, լևոֆլոկսացին, նիֆուրետալ, ֆուրազոլիդոն, դոկսիցիլին (զգայուն են ոչ բոլոր շտամները) և այլն [3]:

Ժամանակի ընթացքում բակտերիաների կազմությունը մշտապես փոփոխվում է, դրանց վերարտադրման ժամանակ առաջանում են տարբեր մուտացիաներ, այդ թվում նաև այն, ինչի շնորհիվ միկրոօրգանիզմները դիմադրողական են դառնում հակաբիոտիկների նկատմամբ: Հակաբիոտիկների հանդեպ դիմադրություն ապահովող մուտացիաների հաճախականությունը բավականաչափ բարձր է, վերապրածները, այսինքն՝ դիմացկուն ձևերը, փոխհատուցում են բակտերիալ կուլտուրայի կորուստի համար: Այսպիսով «ծնվում» են դիմացկուն պաթոգենների նոր ձևեր: Եթե մարդը վարակվում է նոր պաթոգենային ձևերով, ապա այն անիմաստ է բուժել նախկինում օգտագործվող հակաբիոտիկներով: Ներկա ժամանակներում բակտերիաների մուտացիաները դուրս են եկել վերահսկողությունից:

Աղիքային ցուպիկի զգայունության որոշումը հակաբիոտիկների նկատմամբ մեր կողմից իրականացվել է լաբորատոր պայմաններում՝ փորձելով պարզել, թե որ հակաբիոտիկների նկատմամբ է այն առավել

զգայուն: Հետազոտության փորձարարական մասն իրականացվել է ԱՀ ԱՆ ՀԲԿ ՓԲԸ բակտերիոլոգիական լաբորատորիայում: Աշխատանքի ընթացքում կիրառվում են հետևյալ պարագաները՝ հետազոտվող նյութ, քարշիչ պահարաններ, ավտոկլավ, թերմոստատ, մանրադիտակ, մինի շեյկեր, բակտերիոցիդ լամպեր, վառարաններ, սառնարաններ, Պետրիի թասիկներ, որոշիչ թեստեր, ունելի, հակաբիոտիկներ: Անհրաժեշտ է նշել, որ աղիքային վարակների լաբորատոր ախտորոշման հիմնական ձևը կղանքի բակտերիոլոգիական ուսումնասիրությունն է, որի ժամանակ աղիներում բնակվող աղիքային ցուպիկներից անջատում են պաթոգեն ձևերը:

Պաթոգեն աղիքային ցուպիկը լաբորատոր պայմաններում ախտորոշելու նպատակով հետազոտության համար ընդունված կեղտը նոսրացումից հետո ցանվում է համապատասխան սնուցող միջավայրում (Էնդո, Լևինի, Սաբուրո, արյունային, դեղնուցադային միջավայրեր): Եթե արյունային միջավայրում կա հեմոլիզի առկայություն, ապա աշխատանքները տարվելու են այդ գաղութների հետ: Այնուհետև պատրաստի ցանքս կատարված Պետրիի թասիկները տեղափոխվում են թերմոստատ 24 ժամ 37°C պայմաններում: Հաջորդ օրն արդեն դիֆերենցվում է զուտ պաթոգեն աղիքային ցուպիկը: Դիֆերենցումը կատարվում է հետևյալ ձևով՝

1. գաղութների աճի ուսումնասիրումը միջավայրի վրա՝ ըստ ձևի, կառուցվածքի, հեմոլիտիկ հատկության: Աղիքային ցուպիկի հիմնական բնութագրիչ հատկությունը նրա մետաղական փայլն է Էնդո ազարի վրա:

2. քսուքի ներկում Գրամի եղանակով և դրա ուսումնասիրումը:

3. շաքար քայքայելու հատկության ստուգում համապատասխան միջավայրում (Օրկինիցկի միջավայր), պահելով այն 24 ժամ:


4. բիոքիմիական շարքի ուսումնասիրությունը [4]:

Հակաբիոտիկների նկատմամբ աղիքային ցուպիկի զգայունությունը որոշվում է ոչ թե հետազոտվող նյութով, այլ հենց հարուցիչով, որը աճեցվել է հետազոտվող նյութից վերցված կուլտուրայից: Այդ իսկ պատճառով նյութը պետք է վերցնել մինչ հակաբակտերիալ թերապիան:

Աղիքային ցուպիկի հակաբիոտիկների նկատմամբ զգայունության որոշումը կատարվում է հիմնականում սկավառակադիֆուզիոն մեթոդով, որի էությունը կայանում է նրանում, որ բակտերիաների մաքուր կուլտուրաներից կատարվում է ցանքս համապատասխան միջավայրերում, որից հետո տեղադրվում են հակաբիոտիկներով ներծծված սկավառակները: Ընդ որում՝ սկավառակների միջև հեռավորությունը չպետք է փոքր լինի 1,5-2սմ: Այնուհետև թասիկները տեղափոխում են թերմոստատ 24 ժամ 37°C պայմաններում: 24 ժամից հետո արդեն որոշվում է բակտերիաների զգայունությունը համապատասխան հակաբիոտիկների նկատմամբ առաջացրած ստերիլ

զոնաների տրամագծի, որը չափվում է հատուկ սանդղակի և քանոնի միջոցով [5]:

Զգայունության որոշումից հետո աղիքային ցուպիկի պատրաստած քսուքի հետագա ուսումնասիրությունները կատարվել են ԱրՊՀ լաբորատորիայում՝ թվային մանրադիտակի օգնությամբ (նկար):



Նկ. Աղիքային ցուպիկի տեսքը մանրադիտակի տակ

Գաղութներից քսուք պատրաստելիս որոշ դեպքերում, երբ պարզ չէ, թե ստացված գաղութները միայն աղիքային ցուպիկի են, թե ոչ, կատարում են աղիքային ցուպիկի համար որոշիչ թեստեր: Ստացված գաղութներից վերցնում են փոքր չափաբաժին և տեղադրում համապատասխան թեստերում: Առաջինը Ինդոլ թեստն է. եթե այն փոխում է իր գույնը, ապա դա աղիքային ցուպիկ է: Հաջորդ նմանատիպ թեստը Սիմենսի բիոքիմիական շարքի թեստն է, երբ կուլտուրայից վերցված նմուշը հատուկ միջավայրում տեղադրվելուց հետո որոշ ժամանակ անց (24 ժամ) վերջինս փոխում է իր գույնը՝ նարնջագույնից կանաչի: Կա նաև մի այլ թեստ՝ CarTest, որը օգնությամբ շատ կարճ ժամանակահատվածում կարելի է որոշել աղիքային ցուպիկի կուլտուրան: Թեստը որոշում է աղիքային ցուպիկի խիստ պաթոգեն *E.coli* 0157:H7 շտամը, որի ախտորոշման ժամանակ հակաբիոտիկների օգտագործումը խստիվ արգելվում է:

Հարկ է նշել նաև, որ բակտերիոլոգիական հիվանդությունները կրում են հիմնականում սեզոնային բնույթ և յուրաքանչյուր հիվանդություն ունի իր «ծաղկման» շրջանը [6]: Ըստ կատարած ուսումնասիրությունների՝ աղիքային ցուպիկի այդ շրջանն ընդգրկում է գարնան վերջից մինչև ամռան վերջն ընկած ժամանակահատվածը: Աղիքային ցուպիկի ամենասուր շրջանը բաժին է ընկել 2018թ: Հուլիսին լաբորատորիա դիմած 28 հիվանդներից 20-ի մոտ հայտնաբերվել է աղիքային ցուպիկ, օգոստոսին՝ 50-ից 37-ի մոտ: 2015թ հունիսին 36 հիվանդից 20-ի մոտ է արձանագրվել, իսկ 2017թ մայիսին՝ 35-ից 24-ի մոտ:

Գրականություն

1. Դանիելյան Լ.Թ., Ընդհանուր և մասնավոր մանրէաբանություն, Երևան, 2002.
2. Մարտիկյան Հ.Ռ., Ընդհանուր մանրէաբանության հիմունքներ, Երևան, 2015.
3. Сизенцов А.Н., Мисетов И.А., Каримов И.Ф., Антибиотики и химиотерапевтические препараты, Оренбург, 2012.
4. Свойчаков В.Б., Микробиология с основами эпидемиологии и методами микробиологических исследований, Санкт-Петербург.
5. Այվազյան Հ.Մ., Աստվածատրյան Վ.Ա., Աբրահամյան Ռ.Ա., Հանրամատչելի Բժշկական Հանրագիտարան, Երևան, 2001.
6. <https://life.panorama.am/hy/news/2014/02/26/bacteria/103534>

Հոդվածը տպագրված է «Կենսաբանության արդիականացումն Արցախում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում

Հոդվածը տպագրության է նրաշխարհելի խմբագրական կոլեգիայի անդամ, կ.գ.դ. Հ.Գ.Գալստյանը:

ՀՏԴ 595.773.4

Կենդանաբանություն

Նոննա ԳՐԻԳՈՐՅԱՆ

Արցախի պետական համալսարանի կենսաբանության ամբիոնի ասպիրանտ

e-mail: nonna.grigoryan.88@mail.ru

**LIRIOMYZA BRYONIAE (KALTENBACH 1858) ՏԵՍԱԿԻ
ԷԿՈԼՈԳԻԱԿԵՆՍԱՐՔԱՆԱԿԱՆ
ԱՌԱՋԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ
ԷՆՏՈՄՈՖԱՈՒՆԱՅԻՆՈՒԹՅԱՆ**

Աղանձանձերը (*Agromyzidae*) բացառապես ֆիտոֆագ են: Լինելով գյուղատնտեսական վնասատուներ՝ մեծ վնաս են հասցնում բաց և փակ զրուստում աճեցվող բանջարաբոստանային կուլտուրաներին, պտղատու ծառերին, դեղաբույսերին և դեկորատիվ նշանակության բույսերին: 2018 թվականից առ այսօր ուսումնասիրում ենք աղանձանձերի բազմազանությունը և էկոլոգիականաբանական առանձնահատկությունները Արցախի Հանրապետությունում: Հետազոտությունների արդյունքում հայտնաբերվեց *Liriomyza bryoniae* տեսակի աղանձանձը: Այս հոդվածում ներկայացված են տեսակի ընդհանուր բնութագիրը, զարգացման ցիկլերը, հասցրած վնասը և տեր բույսերը:

Բանալի բառեր՝ Արցախ, աղան, վնասատու, թրթուր, հարսնյակ

Н. Григорян

**ЭКОЛОГО-БИОЛОГИЧЕСКИЕ ОСОБЕННОСТИ ВИДА
LIRIOMYZA BRYONIAE (KALTENBACH 1858) В ЭНТОМОФАУНЕ
АРЦАХА**

Минирующие мухи (*Agromyzidae*) являются исключительно фитофагами. Как сельскохозяйственные вредители, они наносят большой ущерб овощам, выращенным в открытом и закрытом грунте, фруктовым деревьям, лекарственным и декоративным растениям. С 2018 года по настоящее время мы занимаемся изучением разнообразия минирующие мух и их эколого-биологических особенностей в Республике Арцах. В результате исследования был выявлен вид *L. Bryoniae*. В этой статье представлено общее описание вида, циклов развития, причиненный вред и растений-хозяев вида.

Ключевые слова: Арцах, мина, вредитель, личинка, куколка

N. Grigoryan

**ECO-BIOLOGICAL CHARACTERISTICS OF LIRIOMYZA
BRYONIAE (KALTENBACH 1858) IN ENTOMOFAUNA OF
ARTSAKH**

Leaf-miners (*Agromyzidae*) are exclusively phytophagous. As agricultural pests, they cause great damage to vegetables grown in open and closed


ground, fruit trees, medicinal and ornamental plants. From 2018 till now we have been studying the diversity of leaf-miners and their ecological-biological features in Artsakh Republic. The result of the study was/has been the species *L. Bryoniae*. This article presents the general description of the species, development cycles, harm caused and the species' host plants.

Keywords. Artsakh, mine, pest, larva, pupa

Հնուց ի վեր մարդը պայքարում էր գյուղատնտեսական բույսերի ամենատարբեր վնասատուների դեմ: Վնասատուները նվազեցնում են մշակաբույսերի բերքատվությունը և դրա որակը՝ պատճառելով հսկայական տնտեսական վնաս: Առավելագույն թվով վնասատուներ հանդիպում են միջատների շրջանում՝ մոտ 10% [1]: Գյուղատնտեսների մոտ վնասատուների դեմ պայքարելու ամենատարածված եղանակը քիմիական մեթոդն է՝ թունաքիմիկատների լայնորեն կիրառումը: Սակայն, ակնհայտ է, որ օգտագործելով թունաքիմիկատներ՝ մենք ոչնչացնում ենք տվյալ վնասատուների բնական թշնամիներին: Ուստի պահանջվում է ուսումնասիրել վնասատուների էկոլոգիան, նրանց զարգացման ցիկլերը, հասցրած վնասի բնույթը, ձևերը, զարգացման և բազմացման առանձնահատկությունները և կիրառել պայքարի կենսաբանական մեթոդ:

Սույն հոդվածում քննարկվող տեսակը (*Liriomyza bryoniae*) ևս համարվում է գյուղատնտեսական վնասատու: Մեր կողմից կատարվող հետազոտությունները առաջին անգամ են իրականացվում Արցախի Հանրապետությունում: Ընդհանրապես ընդունված է, որ ականաճանձերը աշխարհով մեկ լայնորեն տարածված գյուղատնտեսական լուրջ վնասատուներ են: Ականաճանձերի թրթուրները՝ սնվելով տերևների պարենքիմայով, առաջացնում են ականներ: Այդ ականները թրթուրների համար ծառայում են որպես սնվելու և զարգանալու միջավայր: Նման ականներ կարող են առաջանալ նաև ուտելով պտուղների, երիտասարդ ընձյուղների կամ արմատների պարենքիմային հյուսվածքը: Եվ քանի որ հիմնական վնասը հասցնում են թրթուրները, իսկ այդ թրթուրները գտնվում են տերևի էպիդերմիսի տակ, ուստի թունաքիմիկատների կիրառումը այստեղ ապարդյուն է: Այս հոդվածում ներկայացված են *L. Bryoniae* տեսակի էկոլոգիական-սաբանական առանձնահատկությունները, տեսակի ընդհանուր բնութագիրը, զարգացման ու բազմացման առանձնահատկությունները և պատճառած վնասը:

Նյութը և մեթոդները: Աշխատանքի համար նյութ է ծառայել մեր կողմից 2018 թվականից առ այսօր կատարված հետազոտության տվյալներն ու հավաքած նմուշները: Դիտարկումների իրականացման համար ընտրել ենք Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի մասնավոր հողատարածքները (նկ. 1):



Նկ. 1 Ստեփանակերտ քաղաքի
աշխարհագրական դիրքը
քարտեզի վրա

Ականավորված տերևների հավաքը իրականացրել ենք նշված ժամանակահատվածի գարուն, ամառ և աշուն սեզոններում: Ականաճանների տվյալ տեսակի ուսումնասիրությունները կատարվել են տարբեր բանջարաբուստանային կուլտուրաների վրա: Նյութի հավաքի և մշակումների իրականացման համար օգտագործել ենք կենդանաբանության մեջ ընդունված դասական մեթոդները [2,3]: Թրթուրի առկայությունը տերևամաշկի տակ որոշելու, ինչպես նաև տերևների վրա ձևավորված

ականների ուսումնասիրման համար օգտագործել ենք ձեռքի խոշորացույց, իսկ ականաճանների արտաքին կառուցվածքը դիտելու համար օգտագործել ենք Արցախի

պետական համալսարանի լաբորատորայի XSZ-0800 և Andonstar ADSM302 մակնիշի թվային մանրադիտակները:

Տեսակի տարածման արեալները պարզելու համար տարվա տարբեր սեզոններին և ամիսներին իրականացրել ենք էկոլոգիական դիտարկումներ: Տեսակի որոշման համար օգտագործել ենք տարբեր որոշիչներ [3,4]:

Արդյունքների քննարկում: Արցախն իր գոյության ողջ ընթացքում դիտվել է որպես ագրարային երկիր: Արցախի ժողովուրդը իր ջանասեր աշխատանքով ստեղծել է զարգացած ու բազմաճյուղ գյուղատնտեսական արտադրություն, որի հիմնական ճյուղերից մեկն է բուսաբուծությունը: Տնտեսության հետագա խոշորացումը, նոր տեխնոլոգիաների ներդրումը ապահովեցին բուսաբուծական արտադրության կայուն աճ: Այս առումով բավականին հետաքրքիր են Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի մասնավոր հողատարածքները: Ստեփանակերտ քաղաքը գտնվում է ծովի մակերևույթից 813 ± 1 մ բարձրության վրա: Ընտրված տարածքն ունի բնակլիմայական բարեխառն պայմաններ:

Որպես ուսումնասիրման օբյեկտ ընտրել ենք տարբեր բանջարաբուստանային կուլտուրաներ: Հետազոտության արդյունքները ի հայտ բերեցին սննդառության բնույթով պոլիֆագ ականաճանների *Liriomyza bryoniae* (Kaltenbach, 1858) տեսակը, որը պատկանում է *Liriomyza* Mik (1894) ցեղին: Ուսումնասիրած բուսատեսակների մոտ ականաճանձի

տվյալ տեսակի թրթուրների սնման հետևանքով առաջացած ականներն ունեն տարբեր երկարություն, տարբեր է նաև ականների տեղադիրքը տերևների վրա և հարսնյակների զարգացման տևողությունը (աղյուսակ):

Աղյուսակ

Բույսերի միջազգային անվանումները	Թրթուրային շրջան, օր	Հարսնյակային շրջան, օր (26-27°C)	Ականի տիպը	Ականի երկարու- թյունը, սմ	Ականի տեղադիրքը տերևի վրա	Արտաթորանքի տիպը
Beta L., 1753 (բազուկ)	5	9-10	անկանոն սպիրալաձև	11,5- 18,5	առջևի կամ հետևի կողմում	թելանման
Solanum melongena L., 1753 (բադրիջան)	4-5	9-10	անկանոն սպիրալաձև	6,6-9,2	միայն առջևի կողմում	թելանման
Cucumis sativus L., 1753 (վարունգ)	4-5	8-10	անկանոն սպիրալաձև	7-10,3	միայն առջևի կողմում	թելանման
Solanum lycopersicum L , 1753 (տոմատ)	4-5	9-10	անկանոն սպիրալաձև	8,5-9,8	միայն առջևի կողմում	թելանման

Աղյուսակից երևում է, որ նշված բոլոր բուսատեսակների մոտ թրթուրային շրջանը ունի գրեթե նույն տևողությունը: Նույնն է նաև ականների ձևը, թրթուրների արտաթորանքը: Վերջինս թելանման տեսք ունի և գտնվում է ականի ամբողջ երկարության աջ կամ ձախ մասում: Բազուկի մոտ ականներ կարող են առաջանալ տերևի և՛ առջևի, և՛ հետևի կողմերից: Ընդ որում՝ տերևի հակառակ կողմում առաջացած ականները ավելի երկար են: Դա հավանաբար բացատրվում է նրանով, որ տերևի սպունգանման հյուսվածքը պարունակում է ավելի շատ կարծր էլեմենտներ, իսկ թրթուրները հազենում են պրոտեինային բաղադրությամբ բջիջներով, որոնք ավելի շատ են պունաձև հյուսվածքում, այդ պատճառով սպունգանման հյուսվածքը թրթուրների համար քիչ սննդարար է [2]:

Թրթուրներն, ուտելով բանջարաբոստանային կուլտուրաների տերևների մեզոֆիլը, իջեցնում են տվյալ տերևի ֆոտոսինթեզի ինտենսիվությունը: Ինչքան շատ են ականները տվյալ տերևի վրա, այնքան շատ է թրթուրների հասցրած վնասը (նկ. 2):




Նկ. 2 Թրթուրների առաջացրած ականները

վարունգի տերևի վրա

Թրթուրային շրջանը տևում 4-5 օր: Առաջացնում են անկանոն սպիտակաձև ականներ: Հարսնյակային զարգացման տևողությունը չնչին տարբերությամբ բոլոր բուսատեսակների մոտ համարյա նույնն է, նշված մշակաբույսերի մոտ զարգացումը տևում է 8-11 օրում: Հարսնյակային զարգացման ընթացքում փոխվում է հարսնյակների գունավորումը՝ ոսկե-դեղնավունից մինչև մուգ շագանակագույն:

Հասուն առանձնյակները փոքր չափերով ճանճեր են, մարմնի երկարությունը տատանվում է 1,5-2մմ երկարության սահմանում [5]: Ունեն վառ գունավորում, պրեսկուտումը (prescutum) և սկուտումը (scutum) սև է, սկուտելլումը (scutellum) ամբողջովին դեղին է: Բզզանը (halteres) դեղին է: Ճակատը (frons) լայն է, օրբիտալային մազիկները ուղղված են դեպի հետ կամ ուղիղ ցցված են: Աչքի հետևի ծայրում առկա է սև նեղ հատված: Շոշափուկները (palp) դեղին են: Անտենային երրորդ սեգմենտը կլոր է և դեղին: Կոստան միջտ հասնում է մինչև M_{1+2} ջիդը, ունեն լավ զարգացած $dm-cu$ ($m-m$) միջաձիգ ջիդը: M_{1+2} ջիդը գտնվում է թևի գագաթնային մասում: Ունեն փոքր դիսկալ ($1-M_2$) վանդակ: Թևի վերջին CuA_1 ջղի a հատվածը b հատվածից 2 անգամ երկար է [6] (նկ. 3): Դեպի դուրս (vte) և ներս (vti) ուղղված գագաթային քիստերը գլխի վրա գտնվում են դեղին ֆոնի վրա (նկ. 4) [7]:



Նկ. 3 *L. Bryoniae* տեսակի թևի
կառուցվածքը



Նկ. 4 Դեղին ֆոնի վրա գտնվող
դեպի դուրս (vte) և ներս (vti)
ուղղված զագաթային քիստերը

Վերջինս տեսակի տարբերիչ առանձնահատկություններից մեկն է: Դորզալ կողմից փորկիլը (abdomen) սև գույնի է, սև ու լայն տերգիտների արանքում երևում են նեղ ու դեղին գծեր: Փորկիլի ներքին կիսաօղակները (ստերնիտներ) դեղին են: Բոլոր ազդրերը (femora) դեղին են՝ վերևից անցնում է թույլ շագանակագույն գիծ, որը ևս համարվում կարևոր տարբերիչ հատկանիշ, իսկ սրունքները (tibiae) և թաթերը (tarsi) շագանակագույն են [8]:

Այսպիսով՝ ականաճանճերի այս տեսակը, հանդիսանալով պոլիֆագ տեսակ և գյուղատնտեսական կուլտուրաների լուրջ վնասատու, ունի մի շարք տեր բույսեր մորմազգիների (Solanaceae), դմազգիների (Cucurbitaceae), հավակատվազգիների (Amaranthaceae) բուսաբնտանիքներում:

Գրականություն

1. hy.wikipedia.org/wiki/Վնասատու
2. Martin Hering E. Biology of the leaf miners (1951), Berlin, p. 77, 301-309.
3. Бей-Биенко Г.Я. Определитель насекомых европейской части СССР, двукрылые, академия наук СССР (1970), Ленинград, ст. 259-268
4. Spencer, Kenneth A., and George C. Steyskal Manual of the Agromyzidae (Diptera) (1986), United States, p. 11-13; 284-296
5. <https://gd.eppo.int/taxon/LIRIBO/photos>
6. https://agromyzidae.linnaeus.naturalis.nl/linnaeus_ng/app/views/species/nsr_taxon.php?id=57037&cat=CTAB_MEDIA
7. International Plant Protection Convention (IPPC), international standard for phytosanitary measures 27, Genus Liriomyza (2016), Italy, p. 7-18
8. https://keys.lucidcentral.org/keys/v3/leafminers/key/Polyphagous%20Agromyzid%20Leafminers/Media/Html/Liriomyza_bryoniae.htm

Հոդվածը տպագրության է նրաշխարհում խմբագրական կոլեգիայի անդամ, կ.գ.դ. Հ.Գ.Գալստյանը:

ՀՏԴ 581.92

Բուսաբանություն

Արմիդա ՀԱԿՈԲՅԱՆ

ԱրՊՀ կենսաբանության ամբիոնի դոցենտ, գ.գ.թ.

e-mail: armidahakobyan_1@e-mail.ru

ԱՆՏԱՌԱՅԻՆ ԽԱՂՈՂԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴՐԱ ՄԱՍԻՆ

Հողվածում ներկայացված է անտառային խաղողի ծագումը, մորֆոլոգիան և տարածվածությունն Արցախում: Անտառային խաղողը (*V. vinifera ssp: sylvestris gmel.*) = (*Vitis Sylvestris*) պատկանում է չափավոր տաք և մերձարևադարձային կլիմայի բույսերին: Հայ ժողովուրդը վաղուց է զբաղվում խաղողի մշակմամբ: Այդ են վկայում հին պատմիչների թողած արձանագրությունները: Արցախում, առհասարակ, խաղողագործությամբ զբաղվում էին 300–1200 մ բարձրություն ունեցող տարածքներում, այսինքն՝ գլխավորապես հարթավայրային ու նախալեռնային գոտում: Մեր օրերում Արցախում անտառային խաղողը հազվադեպ հանդիպող բուսատեսակ է և մեծամասամբ աճում է գետի հովիտների երկայնքով խոնավ վայրերում՝ առանձին լիանաների և սողացող թփերի տեսքով, կիրճերում, լեռնաշղթաների անտառներում: Որպես խոնավասեր, ջերմասեր բուսատեսակ՝ տարածված է Խաչեն գետի երկարությամբ, միջին լեռնային գոտում, համեմատաբար տաք ու խոնավ կլիմա ունեցող վայրերում: Անտառային խաղողը տարածքը կրճատվող բուսատեսակ է և կարիք ունի պահպանության: Այն սելեկցիոն աշխատանքների համար լավ ելանյութ է:

Բանալի բառեր՝ խաղողագրիներ, անտառային խաղող, լիանա, բազմաձև տերևներ, երկսեռ ծաղիկներ, ողկույզ, թթու պտուղներ, հազվագյուտ տեսակ, սելեկցիոն ելանյութ

A. Акопян

РАСПРОСТРАНЕНИЕ ЛЕСНОГО ВИНОГРАДА В АРЦАХЕ И ИСТОРИЧЕСКИЕ СВЕДЕНИЯ О НЕМ

В статье представлены происхождение, морфология и распространение лесного винограда в Арцахе. Лесной виноград (*V. vinifera ssp: sylvestris gmel.*) = (*Vitis Sylvestris*) относится к умеренно теплему и субтропическому климату растений. Армянский народ давно выращивает виноград. Об этом свидетельствуют надписи, оставленные древними историками. Арцах вообще занимался виноградарством в районах с высотой 300–1200 м, то есть в

основном в низинах и предгорьях. В наши дни лесной виноград является редким видом в Арцахе, и в основном растет во влажных местах вдоль речных долин в виде отдельных лиан и ползучих кустарников, в ущельях, в горных лесах. Как влажный теплолюбивый вид растений, он распространен вдоль реки Хачен, в среднем горном поясе, в относительно теплом и влажном климате. Лесной виноград является сокращающимся растением и нуждается в защите, является хорошим источником материала для селекции.

Ключевые слова: виноградная лоза, лесной виноград, лиана, разнообразные листья, двоеполые цветки, гроздь, кислые плоды, редкий вид, селекционный материал.

A. Hakobyan

THE SPREAD OF FOREST GRAPES IN ARTSAKH AND HISTORICAL INFORMATION ABOUT IT

The article presents the origin, morphology and distribution of forest grapes in Artsakh.

Forest grapes (*V. vinifera* ssp: *sylvestris* gmel.) = (*Vitis Sylvestris*) belongs to temperate warm and subtropical climate plants. The Armenian people have been cultivating grapes for a long time. This is evidenced by the inscriptions left by ancient historians. Artsakh, in general, was engaged in viticulture in areas with a height of 300–1200 m, that is, mainly in the lowlands and foothills (1).

In our day, forest grapes is a rare species in Artsakh and mostly grows in damp areas along the river valleys in the form of lianas and creeping bushes, in gorges, in mountain forests. As a moist, warm-loving plant species it is distributed along the Khachen River, in the middle mountain belt, in relatively hot and humid climates. Forest grapes is a shrinking plant and needs protection. It is a good source of material for breeding.

Keywords. grapevine, forest grapes, liana, variety leaves, bisexual flowers, bunch, sour fruits, rare species, breeding material

Անտառային խաղողը պատկանում է խաղողագիների՝ Vitaceae ընտանիքին: Քարացած մնացորդները վկայում են այն մասին, որ հնագույն ներկայացուցիչները, մինչև մարդու ծագումը, անցել են շատ երկար էվոլյուցիոն ճանապարհ: Խաղողի վաղի ձևագոյացման գործընթացը միոցենում և պլիոցենում հասել է բարձր զարգացման: Այդ ժամանակաշրջանում կլիման շատ տաք էր ու խոնավ, որը նպաստավոր պայմաններ էր ստեղծել խաղողի տեսակների տարբերակման համար (1): Այդ դարաշրջանի վերին շերտերում գտնվել է *Vitis praevinifera* Sap. տեսակը, որի տերևների կտրտվածությունը հիշեցնում է *Vitis vinifera* տեսակը: Սառցապատման դարաշրջանում *Vitis* ցեղի տեսակներից Եվրոպայում մնացել է միայն *Vitis vinifera*-ն, որը, տարածվելով Եվրոպայի հարավային մասերում և Ասիայում, առաջացրել է բազմաթիվ ձևեր: Ամերիկայի տարածքը քիչ սառցապատման է ենթարկվել, որի հետևանքով այդտեղ *Vitis* ցեղից մնացել են մեծ թվով տեսակներ (2):

Հետազոտության նյութը և մեթոդները: Ուսումնասիրության օբյեկտ են հանդիսացել Արցախի անտառներում տարածված անտառային խաղողը, հնադարյան և ժամանակակից տարբեր գրականության աղբյուրներում դրա վերաբերյալ տրված որոշ նյութերը:

Ուսումնասիրությունները կատարվել են երթուղային, գիտական գույքագրման, որոշիչներով որոշման, լուսանկարման մեթոդներով:

Արդյունքներ և քննարկում: Մեր ուսումնասիրության նպատակն է բացահայտել Արցախում պահպանված վայրի խաղողի տարածքները, ծագումը, էկոլոգիան:

Vitaceae ընտանիքն ունի 14 ցեղեր, որոնցից են՝ *Vitis*, *Cifostemma*, *Ampelopsis*, *Ampelocissus*, *Parthenocissus* և այլն: Համեմատաբար լավ ուսումնասիրված է *Vitis* ցեղը, որին են պատկանում հիմնական մշակվող տեսակները: Ըստ Դե-Կանդոլի և Գմելինի՝ *Vitis vinifera* տեսակը բաժանվում է 2 ենթատեսակների՝ *Vitis vinifera sylvestris* (վայրի խաղող) և *Vitis vinifera sativa* (մշակովի խաղող):

Vitis vinifera sylvestris ենթատեսակի ներկայացուցիչները երկտուն և պոլիգամ բույսեր են, տերևները փոքր են: Ֆունկցիոնալ իգական ծաղիկներ ունեցող վազերի վրա հաճախ ամբողջական են, սակավ էլ թույլ կտրտված: Ֆունկցիոնալ արական ծաղիկ ունեցող ձևերի մոտ տերևները հաճախ ուժեղ կտրտված են: Ողկույզները փոքր են, հազվադեպ էլ՝ միջին մեծության: Պտուղները մանր են, կլորավուն, երբեմն օվալաձև, սև, տտիպ համով: Աչքի են ընկնում բարձր ցրտադիմացկունությամբ: *Vitis vinifera*-ի ներկայացուցիչների պտուղների բարձր շաքարայնության շնորհիվ սերմերը մարդկանց և թռչունների միջոցով տարածվել են տարբեր հողակլիմայական պայմաններում՝ առաջացնելով բազմազան ձևագոյացումներ: Ուստի հաճախ դժվար է տարբերել, թե դրանք որ ենթատեսակին են պատկանում: Մեկեկցիոն աշխատանքներում մեծ կիրառություն ունի V. *Labrusca* ամերիկյան խաղողը, որը շատ կայուն է ցրտի, սնկային հիվանդությունների և ֆիլոքսերայի նկատմամբ: Դրանից է ստացվել «Լիդիա» սորտը, որն ունի մուգ կարմրավուն, ելակի համով պտուղներ: Իսկ V. *Labrusca* և *Vitis vinifera* -ի բնական տրամախաչումից ստացված «Իգաբելա» սորտն ունի սև պտուղներ, ելակի համ, և հավանական է, որ Արցախում մեծ տարածում գտած «մուշկետ» խաղողը, որը շատ դիմացկուն է սնկային հիվանդությունների, ֆիլոքսերայի հանդեպ, «Իգաբելա» սորտի տարատեսակներից է:

Կանաչապատման մեջ օգտագործվում են խաղողագիների ընտանիքի *Ampelopsis Michx* ցեղի 2 ներկայացուցիչներ՝ *A. aconitifolia* Bge և *A. japonica* (Thunb). (Makino), ինչպես նաև *Parthenocissus Panch* (կուսախաղող) ցեղի մի տեսակ՝ հնգատերև կուսախաղողը *P. quinquefolia* (L.) Planch., որը լավ հարմարված է չորային պայմաններին:

Սովետական և արտասահմանյան գիտնականների կողմից (Ա. Մ. Նեգրուլ, Պ. Բ. Բարանովը, Վ. Մ. Մալիկով, Ի. Կ. Իվանով, Կ. Ի. Կատերով և այլ) վայրի խաղողի ուսումնասիրությունները թույլ տվեցին հաստատել, որ Եվրոպասիական մշակովի խաղողն առաջացել է վայրի խաղողից՝ *Vitis vinifera* ssp. *sylvestris* (Նկար 1):



Նկար 1. *Vitis vinifera* ssp. *sylvestris*

Ըստ Ա.Մ Նեգրուլի՝ մշակովի խաղողի ծագման ամենավաղ կենտրոնը Մերձավոր Արևելքն էր, ավելի ուշ՝ Կենտրոնական Ասիայի շրջանը: Ավելի ուշ ժամանակաշրջանում վայրի անտառային խաղողի մշակումը տարածվեց Եվրասիայի այլ շրջաններում:

Հայ ժողովուրդը վաղուց էր զբաղվում խաղողի մշակմամբ: Ստույգ տեղեկություններ ստանալու նպատակով ուսումնասիրեցինք պատմիչների թողած արձանագրությունները, հնագիտական պեղումների արդյունքները: Միջնադարյան Հայաստանի առավել զարգացած և բարեբեր տնտեսական շրջաններից էր Արցախ նահանգը, որը X–XIII դարերում հայ, մասամբ նաև օտար (արաբապարսկական, վրաց) պատմիչների կողմից հիշատակվում է առավելապես Խաչեն անվամբ (3–5):

Արցախի Տիգրանակերտի 2012 թ. հնագիտական հետազոտության հիմնական արդյունքներից պարզվում է, որ Արցախյան հարթավայրում բավականին տարածված էր վայրի խաղողը (լատիներեն՝ *Vitis vinifera*) (1): Արցախում, առհասարակ, խաղողագործությամբ զբաղվում էին 300–1200 մ

բարձրություն ունեցող տարածքներում, այսինքն՝ գլխավորապես հարթավայրային ու նախալեռնային գոտում (1):

Տիգրանակերտի այգեգործական, տվյալ պարագայում՝ խաղողագործական մշակույթի հետ կողմնակիորեն առնչվում են քաղաքի Կենտրոնական թաղամասում բացված V–VI դդ. քրիստոնեական բազիլիկիայի շքամուտքերի խոյակները, այստեղ պատկերված են խաղողի ողկույզներ, որոնց ուղեկցում են շրջանի մեջ ներառված հավասարաթև խաչերը:

Բայլականի (Օրեն-Կալա) պեղումների ժամանակ (քաղաք, որը գտնվում է Տիգրանակերտից ոչ շատ հեռու և բնակլիմայական նույն պայմաններում) հայտնաբերվել են դեղձի, խաղողի, բալի կորիզներ, ընդ որում՝ մեծ թիվ են կազմում խաղողի կորիզները, իսկ հորերից մեկում էլ՝ ձմերուկի կորիզ (6) :

Արցախում այգեգործության մասին մյուս վկայությունները մեզ տալիս են վիմագիր արձանագրությունները, որտեղ բազմիցս նշվում է «այգիե բառը, որը միջին դարերում նշանակում էր ոչ թե ընդհանրապես պտղատու այգի, այլ՝ խաղողուտ, խաղողի այգի և հենց խաղողի որթը՝ «Պարտեզ՝ ուր խիտ առ խիտ տնկեալիցեն որթք խաղողոյե»: Արցախի մի շարք վիմագրերում նորատունկ այգի իմաստով հանդես է գալիս նաև «մատաղիս» բառը: «Մատաղիս» բառի բառաքննության համար առավելապես պետք է նկատի ունենալ նրա «մատաղ» արմատը, որը նշանակում է մատղաշ, փափուկ, դեռատի, ինչպես նաև նորատունկ (7): «Մատաղիս» բառի մյուս հիշատակությանը հանդիպում ենք Հին Վաղուհաս գյուղատեղում(8):

Մեր օրերում վայրի խաղող կարելի է հանդիպել հազվադեպ: Արցախում այն հանդիպում է մինչև 1000 մ բարձրություններում: Այն բազմամյա, տերևաթափ, փայտացողուն լիանա է, որը կառչելով բարձրանում է մինչև 20 մ, պատված է մոխրադարչնագույն բարակ-մազապատ կեղևով: Վայրի խաղողը երկտուն բույս է, ունի արական և ֆունկցիոնալ-իգական ծաղիկներ: Տերևները հիմնականում փոքր կամ միջին չափի են, ամբողջական կամ թեթևակիորեն բաժանված, եռբաժան, հազվադեպ՝ հնգբաժան: Ողկույզները փոքր են, երբեմն միջին չափի, հատապտուղները փոքր են, սև, կլոր, հազվադեպ էլ՝ ձվաձև: Պտուղներն ունեն թթվաշ համ, որոշակի տոփայություն: Կեղևը և սերմերը դժվար է տարանջատել: Մառնամանիքադիմացկուն չէ, սակայն երաշտադիմացկուն է: Այն լավ է աճում փուխր և խոնավ հողերում:

Տարբեր շրջաններում տարածված վայրի խաղողի ուսումնասիրություններից պարզվել է, որ սրանք իրարից թեթևակի տարբերվում են տերևների կտրվածքով, ողկույզի ձևով (նկար 2):

**Գյուլ Պատարա****Գյուլ Սեյիշեն,****Գյուլ Դրմբոն****Գյուլ Վաղուհաս****Գյուլ Ծմակահող****Գյուլ Տումի**

Նկար 2. Անտառային խաղողի լուսանկարները տարբեր տարածքներից

Խաչեն գետի երկարությամբ հանդիպող վայրի խաղողի վազը, մեծամասամբ, ունի համարյա ամբողջական տերևներ, ողկույզները մսալի են, ավելի լիքը, ցողունը հաստ (Մեյդիշեն, Ծմակահող, Շահմասուր, Առաջածոր, Դրմբոն): Անտառների բացատներում տարածված վայրի խաղողն ունի եռթաժան տերևներ, բարակ, հիմնականում սողացող ցողուն, պտուղները ողկույզի վրա մի քանի հատ են, տտիպ համով, դժվար են տարանջատվում պտղաթաղանթից (Վաղուհաս, Ակնաղբյուր/ Ասկերանի շրջան/, Պատարա, Քոլատակ, Տումի, Տոդ): Որոշ տարածքներում էլ անտառային խաղողի վրա պտուղներ չկան, ցողունը շատ բարակ է գետնին փոված, սողացող, տերևները նուրբ են, բաց կանաչավուն: Դա այն վայրերում է, որտեղ խաղողն ունի «մրցակից» այլ բուսատեսակներ: Ժողովրդի մոտ տարածված է այն կարծիքը, որ վայրի խաղողը թունավոր է, չի կարելի օգտագործել սննդի համար: Մինչև այժմ չեն գրանցված թունավորման դեպքեր: Այն պարզապես տտիպ համի պատճառով անդուր է:

Այսպիսով՝ անտառային խաղողը Արցախում հազվադեպ է հանդիպում և համարվում է տարածքը կրճատող բուսատեսակ: Այն որպես սելեկցիոն աշխատանքների համար լավ ելանյութ, կարիք ունի պահպանության:

Գրականություն

1. Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., Կարապետյան Ի., Գաբրիելյան Ա., Վարդանեստովա Տ., Հովսեփյան Ռ., Արցախի Տիգրանակերտի 2012 թ. հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները, Հնագիտական ուսումնասիրություններն Արցախում 2011, 2012, Ստեփանակերտ, 2015, էջ 91–93:
2. Այվազյան Պ.Կ., Այվազյան Գ.Պ. Խաղողագործություն սելեկցիայի և ամպիլոգրաֆիայի հիմունքներով, Երևան, 2003, 632 էջ:
3. Հ ա կ ո բ յ ա ն Ա., Խաչեն-Խոխանաբերդ ամրոցը և նրա իշխանատոհմը Թ–ԺԳ դարերում, «Հանդես ամսօրեայ», Վիեննա–Երևան, 2010, թիւ 1–12, էջ 73–90,
4. Հակոբյան Ա. Պատմա-աշխարհագրական և վիճակագրական հետազոտություններ, Արցախ և Ուտիք, Վիեննա–Երևան, 2009, էջ 252–253:
5. Ուլուբաբյան Բ., Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Երևան, 1975, էջ 31:
6. Я к о б с о н А. Л., Археологические исследования на городище Орен-Кала. Труды азербайджанской (Орен-калинской) археологической экспедиции, Материалы и исследования по археологии СССР, т. III, 133. М.–Л., 1965, с. 11, 13;
7. Миклухо - Маклай Н. Д., Географическое сочинение XIII века на персидском языке, Новый источник по исторической географии Азербайджана и Армении, т. IX. М.–Л., 1954, с. 175–196.
8. Դիվան հայ վիճագրության, պր. V, էջ 114–115:

Ն

Հոդվածը տպագրության է ներառվում խմբագրական կոլեգիայի անդամ, կ.գ.դ. Հ.Գ.Գալստյանը:

ՀՏԴ 582.284Մակարանություն**Գայանե ՄԱՐԳԱՐՅԱՆ****կ.գ.թ., դոցենտ, ԱրՊՀ գիտաբարոյաբան****e-mail: gayanegeorgevna1981@mail.ru****Մանուշ ՄԻՐԶՈՅԱՆ****Շուշիի տեխնոլոգիական համալսարան, ագրոնոմիայի ամբիոնի դասախոս****e-mail: manush.77@yandex.com****Անուշ ՂԱՐԻԲՅԱՆ****Կենսաբանության ամբիոնի մագիստրոս****ԱՐԵՎԱԾԱՐԿԻ ՄՆԿԱՑԻՆ****ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆՆ****ԱՐՑԱԽՈՒՄ**

Մակարայի մակերի տեսակային կազմի բացահայտումը կարևոր և որոշիչ նշանակություն ունի դրանց դեմ պայքարում արդյունավետ պայքար իրականացնելու հարցում: 2017-2019թթ. Արցախում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել ու իդենտիֆիկացվել է արևածաղիկին ախտահարող 9 տեսակի սնկային հիվանդություն /արյացող, անտրակնոզ, սեպտորիոզ, ժանգասունկ, մոխրագույն և մոնիլային փտում, ասկոխիտոզ, թառամում/:

Պարզաբանվել են նշված սնկերի զարգացման կենսաբանական առանձնահատկությունները, տեր-բույսերի ընկալունակությունը հիվանդածին սնկերի նկատմամբ և հարմարվածությունն Արցախի բնակլիմայական պայմաններին:

Բանալի բառեր` Արցախ, տեր-բույս, մակարայի մակեր, սնկային հիվանդություն:

Г.Маргарян, М.Мирзоян, А.Гарибян**ИССЛЕДОВАНИЕ ГРИБКОВЫХ ЗАБОЛЕВАНИЙ****ПОДСОЛНУХА В АРЦАХЕ**

Выявление видового состава паразитных грибов имеет важное и определяющее значение в вопросе осуществления эффективной борьбы против них. В результате осуществленных в 2017-2019 гг. работ в Арцахе выявлены и идентифицированы 9 видов грибковых заболеваний, поражающих подсолнух (мучнистая роса, антракноз, септориоз, ржавчинный грибок, серая и монолитная гниль, аскохитоз, увядание).

Выяснены биологические закономерности развития указанных грибов, восприимчивость растений-хозяев по отношению к паразитируемым грибам и их адаптация к природно-климатическим условиям Арцаха.

Ключевые слова: Арцах, растение-хозяин, грибы-паразиты, грибковое заболевание.

G.Margaryan, M.Mirzoyan, A.Gharibyan
SUNFLOWER FUNGAL DISEASES'S STUDY IN ARTSAKH

The discovery of the parasitic fungi type is a crucial and decisive importance in the effective struggle against them. In 2017-2019, in Artsakh carried out as a result of the research, eight types of fungal diseases such as sunflower which were identified as frozen, untreated, celestial, rust, gray and monolithic rot, ascocyste, wilting.

The article clarifies the biological peculiarities of the development of the mentioned fungus, the perception of host-plants on the pathogenic mushrooms and the adaptation to the climatic conditions of Artsakh .

Keywords. *Artsakh, host-plants, parasitic fungi, fungal diseases.*

Միկրոմիցետներն իրենց կենսաբանական առանձնահատկություններով յուրահատուկ խումբ են կազմում: Սնկերի ուսումնասիրությունը ինստ անհրաժեշտ է, քանի որ, լինելով մակաբույծներ, հեշտությամբ վարակում են տարբեր նշանակության բուսատեսակներ՝ բացասաբար անդրադառնալով դրանց նպատակային նշանակությանը: Միկրոմիցետների, բազմակողմանի ուսումնասիրությունը սկիզբ է դրվել 19-րդ դարի կեսերից՝ աշխարհի տարբեր երկրներում, այդ թվում՝ Հարավային Կովկասում և Հայաստանում: Արցախի որոշ շրջաններում հանդիպող մակաբույծ սնկերի վերաբերյալ սակավաթիվ տեղեկություններ կարելի է գտնել Վ.Ի. Ուլյանիշչևի աշխատություններում, իսկ ավելի ընդգրկուն հետազոտությունները սկիզբ են դրվել 21-րդ դարի առաջին տասնամյակից և շարունակվում են առ այսօր [1-5]: Արցախի բուսական աշխարհը և բնակլիմայական պայմանները բարենպաստ են մակաբույծ մի շարք սնկերի զարգացման համար, այդ պատճառով շարունակվում են նշված տարածաշրջանի բուսատեսակներն ախտահարող սնկային հիվանդությունների ուսումնասիրությունը, սնկերի տեսակային կազմի բացահայտումը և կենսագործունեության բնորոշ առանձնահատկությունների նկարագրությունը [6-7]:

Ներկայացված հոդվածի մեջ ամփոփված են արևածաղկի վրա մակաբուծող սնկային հիվանդությունների վերաբերյալ տեղեկությունները, որոնք հավաքագրվել են 2017-2019թթ.:

Արցախում արևածաղիկն ունի բարձր արտադրական նշանակություն, որի համար տարբեր ծրագրերով խրախուսվում է Արևածաղկի մշակումը: Ճիշտ մշակմանը զուգահեռ անհրաժեշտ է նաև ապահովել բերքի հավաքը և պահեստավորումը: Արևածաղկի բարձր բերքատվությունն ապահովելու համար անհրաժեշտ է ժամանակին ախտորոշել սնկային հիվանդությունները և կիրառել համապատասխան պայքարի միջոցներ: Հետազոտման նյութ հանդիսացող տեր-բույսերն ընկալունակ են մի շարք սնկային հիվանդությունների նկատմամբ, ինչպիսիք են ալտեռնարիոզը, անտրաքնոզը, չոր փտումը, ժանգասունկը, ալրացողը և այլն: Վերջիններիս

զարգացումը ոչ միայն նվազեցնում է տեր-բույսերի բերքատվությունը և ազդում բերքի որակի վրա, այլև կարող է հանգեցնել բույսի մասնակի կամ լրիվ ոչնչացման [7]: Մակաբույծ սնկերի տեսակային կազմի բացահայտումը կարևոր և որոշիչ նշանակություն ունի դրանց դեմ արդյունավետ, ճիշտ պայքար իրականացնելու հարցում, իսկ հիվանդությունների դեմ պայքարն այսօր Արցախի գյուղատնտեսության զարգացման արդիական և հրատապ հիմնախնդիրներից է, քանի որ արևածաղիկը համարվում է մեր տարածաշրջանում կիրառական նշանակություն ունեցող մշակաբույս:

2017 - 2019 թթ. մեր կողմից Արցախում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքում հայտնաբերվել և իդենտիֆիկացվել են ուսումնասիրվող տեր-բույսն ախտահարող 9 տեսակի սնկային հիվանդություններ, որոնք նույնականացվել են ախտահարված բույսերի արտաքին զննումների և մանրադիտակային հետազոտությունների /ախտահարված օջախից ստացված պատրաստուկի դիտում/, ինչպես նաև որոշիչների կիրառմամբ, իսկ դրանց անվանումները համապատասխանեցվել են ժամանակակից կարգաբանությանը [8-10]:

Սնկային հիվանդություններով ախտահարվում են արևածաղիկի վերգետնյա բոլոր օրգանները: Հիվանդությունների դրսևորման արդյունքում դիտվել է բերքի կտրուկ նվազում, ինչպես նաև որակական ու համալին արժեքների փոփոխություն: Ստորև ներկայացնում ենք տեղեկություններ արևածաղիկն ախտահարող սնկային հիվանդությունների վերաբերյալ:

Տեր-բույս՝ արևածաղիկ (*Helianthus annuus* L.)

1. Արևածաղիկի ժանգ-*Puccinia helianthi* Schwein.

Նկարագրող սունկն ախտահարում է տեր-բույսի տերևները: Հիվանդ օջախներում առաջանում են դեղին ժանգագույն կուտակումներ, որտեղ զարգանում են սպորմագոնիումներ, էցիդիումներ, որեդինիումներ և տելիումներ: Սպերմագոնիումները տեղակայվում են տերևների գույգ մակերեսներին, կլորավուն են կամ անկանոն խմբերով, ունեն դեղին գունավորում: Սովորաբար ախտահարվում են առաջին տերևները, որոնց ստորին մակերեսին զարգանում է էցիդիալ փուլը, և ձևավորվում են սպորները: Էցիդիոսպորները էլիպսաձև են, թաղանթը՝ մանր փշկապատ: Ուրեդինիումները հիմնականում տեղակայվում են տերևների ստորին մակերեսներին, դարչնագույն են, անկանոն, ցրված և փոշիացող: Ուրեդինիոսպորները նույնպես էլիպսոիդալ են, գորշ գունավորության, հազվադեպ փշկավոր թաղանթով: Տելիումները տերևների ստորին մակերեսին են, հազվադեպ վերին մակերեսներին, կլորավուն են, փոշիացող, փոքր, սև կամ դարչնագույն: Տելիոսպորները էլիպսոիդալ են կամ քորոցանման, գազաթուր կլորացած կամ սեղմված, հիմքում՝ նույնպես սեղմված: Արևածաղիկի ժանգը առաջացնում է տերևների դեղնում և ժամանակից շուտ չորացում, ինչը բացասաբար է ազդում բույսի

կենսագործունեության, բերքատվության և բերքի որակի վրա: Սունկը հիմնականում ախտահարում է փարթամ ցանքերը և ինտենսիվ արտահայտվածության դեպքում բացասաբար է անդրադառնում բույսի հետակենսագործունեության վրա:

Արևածաղկի ժանգասունկը հայտնաբերվել է հետազոտության բոլոր տարիներին առանձին օջախներով և համատարած բնույթ չէր կրում:

2. Մոխրագույն փտում- *Botrytis cinerea Pers.*

Տվյալ սունկն ախտահարում է գրեթե բոլոր պտուղ-բանջարեղենները, որի հետևանքով առաջանում է մոխրագույն թավշե ծածկ՝ սնկամարմին սպորակրությամբ: Մոխրագույն փտում առաջացնող սնկի հարուցիչը կարող է ախտահարել տեր-բույսի ցողունը, ծաղկաբույլը և զամբյուղաթափքը: Սնկի զարգացումը ինտենսիվ է ընթանում խոնավության առկայության դեպքում, և սնկի ծաղկումը հիմնականում լինում է աշնանը՝ արևածաղկի բերքահավաքի նախաշեմին: Խոնավության առկայության դեպքում պտղաբույլերն ամբողջությամբ ախտահարվում և կորցնում են պիտանելիությունը: Վարակը սկսվում է դաշտում և կարող է շարունակվել պահեստավորման ու տեղափոխման ժամանակ:

Մոխրագույն փտում սնկային հիվանդությանը բնորոշ է նաև բորբոսին բնորոշ հոտ, որը բերքի պահպանման ժամանակ կարող է տարածվել առողջ պտղաբույլերի վրա՝ բացասական ազդեցություն թողնելով դրանց որակական հատկությունների և արտադրական նշանակության վրա:

Արցախում վարակի օջախներ հայտնաբերվել են հետազոտության բոլոր տարիներին: Ախտահարված օջախներ դիտվել են երբեմն ցողունի, ծաղկաբույլի, իսկ հիմնականում պտղաբույլի վրա:

3. Արևածաղկի կեղծ ալրացող-*Plasmopara halstedii (Farl.) Berl. & De Toni*

Տվյալ սունկ կարող է ախտահարել արևածաղկի տերևները, ցողունը և ծաղկաբույլերը:

Հիվանդությունը հիմնականում դրսևորվում է տեր-բույսի վեգետացիայի սկզբնական փուլում: Սնկի ինտենսիվ զարգացման հետևանքով կարող է խախտվել բույսերի արմատային համակարգի զարգացումը և դիտվել բույսերի գաճաճություն: Ախտահարված տերևների վերին հարթ մակերեսը կարծես գանգրանում է, իսկ դրա հակառակ կողմում՝ տերևների ստորին մակերեսներին, առաջանում է սնկի սպորակրությունը, որն արտահայտվում է սպիտակ, խիտ թաղանթի ձևավորմամբ: Երբեմն կարող է դիտվել նաև արևածաղկի տունկերի ավելի ուշ ախտահարում, որը դիտվում է ծաղկման շրջանում և արտահայտվում է ցողունների վրա տարածվող մուգ կանաչ բծերի՝ սպորակրության օջախների ի հայտ գալով: Ախտահարված օջախներում տեղի է ունենում սպորների զարգացումը, որի հետևանքով խախտվում է վարակված հյուսվածքների կառուցվածքը և կենսագործունեությունը, ինչի արդյունքում հյուսվածքները պնդանում և դառնում են փխրուն: Հիվանդ օջախների ներքին հյուսվածքներում ձևավորվում է սնկի էնդոֆիտ, անգույն կամ բաց դեղնավուն

սնկամարմինը: Սնկի զարգացումն անցնում է անոմորֆ և տելիոմորֆ զարգացման փուլերով: Զարգացման անոմորֆ փուլում հարուցիչն առաջացնում է ոչ բջջային միցելիում, զոոսպորանգիումներ՝ երկմտրակ շարժուն զոոսպորներով: Տելիոմորֆ զարգացման փուլում ձևավորվում են օոսպորներ: Սնկի տարածման աղբյուր են համարվում զոոսպորները, սնկամարմին կրող սերմնահատիկները և օոսպորները, որոնք կարող են մի քանի տարի մնալ հողում:

Նկարագրվող սունկը վնասաբեր է և հայտնաբերվել է հետազոտության բոլոր տարիներին:

4. Արևածաղկի թառամում- *Verticillium albo-atrum* Reinke & Berthold

Սունկը ախտահարում է բույսն ամբողջությամբ: Սնկի զարգացման գործընթացը զարգանում է անոմորֆ փուլով: Հարուցիչի ձևաբանական կառուցվածքները միկրոսկլերոցիումներն են, որոնք իրենցից ներկայացնում են անգույն սնկամարմիններ՝ կոնիդակիրներով ու կոնիդիոլիումներով: Վերջիններս միաբջիջ են, անգույն և ձևավորվում են կոնիդիակիրների գագաթային հատվածներում: Սկլերոցիումների ձևով կարող է հարուցիչը մնալ հողում 3 և ավելի տարիներ: Հիվանդության տարածման աղբյուր են համարվում վարակակիր բուսական մնացորդները, սերմերը, մոլախոտները և սուբստրատը: Սունկը կարող է զարգանալ անձրևային և չորային պայմաններում, բայց ունի արտաքին նշանների տարբեր դրսևորում: Խոնավ պայմաններում սնկի զարգացումն ուղեկցվում է ախտահարված օջախների վրա սպիտակ փառի առաջացմամբ: Ախտահարումները դիտվել ստորին տերևների կամ տերբույսի ծաղկաբույլերի վրա: Ախտահարված տերևները նախ կորցնում են տուրգորի հատկությունը, այնուհետև ստանում են թույլ կանաչ կամ դեղին գունավորում, իսկ ավելի ուշ՝ կարմրադարչնագույն: Հետագայում սունկը տարածվում է նաև վերին տերևների և պտղաբույլերի վրա: Ախտահարված պտղաբույլերում սնկամարմինը թափանցում է սերմերի մեջ: Վարակված տերևների, ցողունի և պտղաթափքի ներքին հյուսվածքները ստանում են մուգ դարչնագույն գունավորում, որն էլ համարվում է նկարագրվող սնկի բնութագրիչ հատկանիշներից մեկը:

Չորային եղանակի պայմաններում ֆուզարիոզային թառամում սնկային հիվանդության բնորոշ ախտանշանը է ամբողջ բույսի թորշոմումը: Հիվանդության վարակը տեղի է ունենում հողում առկա միկրոսկլերոցիումների տեր-բույսի՝ արմատային համակարգ թափանցմամբ: Եվ չորային և խոնավ եղանակային պայմաններում նկարագրվող սնկի զարգացումը և տարածումը հանգեցնում է բերքի մասնակի կամ զգալի կորստի:

Սունկն Արցախում տարածված տեսակ է, հայտնաբերվել է հետազոտության բոլոր տարիներին՝ բույսի ծաղկման փուլում և կարող է ախտահարել մի շարք այլ բանջարաբոստանային կուլտուրաների:

5. Արևածաղկի սև բծավորություն՝ *Plenodomus lindquistii* (Frezzi) Gruyter, Aveskamp & Verkley:

Սունկն ախտահարում է տեր-բույսի բոլոր օրգանները, չնայած հարուցիչի բնորոշ ախտանշաններն ավելի տեսանելի են ցողունների վրա: Վերջիններիս մակերեսային հյուսվածքների վրա առաջանում են երկարավուն կամ գոտկաձև սև նեկրոտիկ օջախներ եզրագծված դեղնավուն շերտով: Այդ օջախներն ավելի արտահայտված են ցողունների ստորին հատվածներում: Սնկի զարգացմանը զուգընթաց ախտահարումը տարածվում է տերևների և ծաղկաթափքերի վրա, որից հետո կարող է դիտվել սերմիկների վարակ: Վարակված օջախներում զարգանում է բազմաբջիջ սնկամարմինը, որն ունի բաց կամ մուգ մոխրագույն գունավորություն: Սնկամարմնում ձևավորվում են գլանաձև ձգված պարկերը, որոնց մեջ զարգանում են գլանաձև կոնիդիումները: Վերջիններս ունեն ծակոտկեն միջնապատ: Պիկնիդները և պերիտեցիումը զարգանում են հիմնականում ախտահարված օջախների մակերեսային հյուսվածքներում:

Ինտենսիվ զարգացման ժամանակ սունկը թափանցում է մինչև ցողունների խորքը, որին ուղեկցում է հյուսվածքների ճեղքավորումը: Արդյունքում ցողունները դառնում են դյուրաբեկ և չեն դիմանում ծաղկաբույլի կամ պտղաթափքի ծանրությանը: Սնկի վարակի աղբյուր են համարվում հիվանդ բույսերի և սերմերի մնացորդները, իսկ հարուցիչի տարածումը կարող է տեղի ունենալ ջրի կաթիլով կամ միջատների միջոցով:

Արևածաղկի սև բծավորություն սնկային հիվանդության ինտենսիվ դրսևորման հետևանքով դիտվում է բերքի մասնակի կորուստ: Հիվանդության կանխարգելման համար անհրաժեշտ է ապահովել ցանքաշրջանառություն, ախտահանված սերմերի ցանքս և կայուն սորտերի մշակում:

Նկարագրվող սունկն Արցախում տարածված տեսակ է և հայտնաբերվել է հետազոտության բոլոր տարիներին:

6. Արևածաղկի ալտեռնարիոզ- *Alternaria helianthi* (Hansf.) E.G. Simmons

Ախտահարվում են տերևները, ցողունները, ծաղկաբույլերը և պտղաթափքերը, որոնց վրա առաջանում են անկանոն բծեր: Սնկի զարգացման սկզբնական փուլում տեր-բույսի առաջին տերևների վրա առաջանում են կլորավուն դեղին օջախներ: Հիմնական տերևների վրա ախտահարումն արտահայտվում է նախ անկանոն ոչ մեծ բծերի առաջացմամբ, այնուհետև սնկի զարգացմանը զուգընթաց վարակի օջախները մեծանում են և առաջացնում հյուսվածքների չորացում: Ցողունների և պտղաթափքերի վրա հիվանդությունն արտահայտվում է անկանոն, գորշ կամ մուգ բծերի առաջացմամբ: Խոնավության առկայության դեպքում վարակված օջախներում զարգանում է սնկի սպորակրությունը, որում ձևավորվում են կոնիդիակիրները

կոնիդիումներով: Վերջիններս տեղակայված են դյուրաբեկ շղթաներով: Մսկի վարակի աղբյուր կարող են համարվել արևածաղկի վարակված մնացորդները և սերմերը: Արևածաղկի ալտեռնարիոզը կարող է զարգանալ տեր-բույսի վեգետացիայի բոլոր փուլերում, սակայն հիվանդության ծաղկում դիտվում է հատկապես պտղաթափքերի հասունացման շրջանում: Վերջինս պայմանավորված է սնկի զարգացման համար բարենպաստ պայմանների /խոնավության/ առկայությամբ: Այդ պատճառով նկարագրվող և արևածաղկին բնորոշ մի շարք այլ սնկային հիվանդությունների կանխարգելման համար խորհուրդ է տրվում կատարել ցանքաշրջանառություն, մշակել միայն ախտահանված սերմացու և առավել կայուն սորտեր:

Սունկն Արցախում տարածված և վնասաբեր տեսակ է, հայտնաբերվել է հետազոտության բոլոր տարիներին:

7. Արևածաղկի չոր փտում- *Rhizopus stolonifer (Ehrenb.) Vuill.*

Սունկն ախտահարում է տեր-բույսի պտղաթափքերը: Հիվանդությունը կարող է դրսևորվել դաշտում և շարունակվել պահեստավորման ու պահպանման ժամանակ: Սունկը զարգացման ընթացքում ունի տելիոմորֆ փուլ զիգոսպորի ձևով, որն առաջանում են ձմեռած միցելիումի վրա: Անոմորֆ փուլը արտահայտվում է գնդաձև, մուգ գունավորության սպորանգիումներով: Սունկը ունի խիտ ճյուղավորված ռիզոմներ: Սպորակրությունը սև է՝ կույտերով: Սպորները կլորավուն են, մուգ գունավորության: Նկարագրվող հիվանդության վարակի առաջին օջախները հայտնաբերվել են տեր-բույսի ծաղկման շրջանում՝ ծակաբույլի հակառակ մակերեսին: Որոշ ժամանակ անց արդեն ծաղկաբույլի սերմիկների վրա զարգանում է չոր փտում առաջացնող սնկի մոխրագույն սնկամարմինը: Վերջինիս հարակից հյուսվածքները պնդանում են: Հիվանդ ծաղկաբույլերը չորանում են: Սերմիկները դառնում են կարծր ու դառնահամ: Մսկի ինտենսիվ զարգացումն ուղեկցվում է բերքի մասնակի կորստով: Մսկի զարգացմանը նպաստում են չոր և տաք եղանակային պայմանները, իսկ խոնավության առկայության դեպքում հիվանդությունը ճնշվում է: Նկարագրվող սնկի տարածման աղբյուր են համարվում վարակված բուսական մնացորդները և վարակակիր սերմերը: Արևածաղկի չոր փտում հիվանդության կանխարգելման համար խորհուրդ է տրվում կատարել ցանքաշրջանառություն, մշակել ախտահանված սերմացու և առավել կայուն սորտեր:

Սունկն Արցախում հաճախ հանդիպող տեսակ է, հայտնաբերվել է հետազոտության բոլոր տարիներին:

8. Արևածաղկի ալրացող- *Erysiphe cichoracearum*

Սունկը կարող է ախտահարել տեր-բույսի տերևները, ցողունները: Մսկի արտաքին դրսևորումն արտահայտվում է վարակված օջախներում սպիտակ թելանման փառի՝ սնկամարմանի առաջացմամբ: Մսկամարմինը հիմնականում տեղակայվում է տերևների վերին

մակերեսներին: Սնկամարմնի մեջ զարգանում է սնկի սպորակրությունը: Ավելի ուշ տերևների ախտահարված հատվածների ստորին մակերեսներին ձևավորվում են առանձին անկյունաձև, դեղին եզրագծված բծեր, որոնք կարծես խրված են հյուսվածքների մեջ: Արևածաղկի վեգետացիայի ընթացքում ալրացողը կարող է տալ անսեռ սպորակրության մի քանի սերունդ, որոնք նոր վարակի աղբյուր են: Կոնիդիումները հիմնականում շղթայաձև են, երբեմն՝ առանձնացված: Արևածաղկի վեգետացիայի ավարտին ախտահարված օջախներում սկսվում է սնկի զարգացման սեռական փուլը, որն ուղեկցվում է փակ պտղամարմինների՝ կլեյստոտեցիումների առաջացմամբ:

Նկարագրվող հիվանդության առաջնային վարակի աղբյուր է համարվում պերիտեցիումը և ձմեռած սնկամարմինը, որոնք պահպանվել են տեր-բույսի վարակված մնացորդների վրա: Սնկի ինտենսիվ արտահայտվածությունը հիմնականում արտահայտվում է արևածաղկի ծաղկման շրջանում և կարող է մասնակի վնաս հասցնել բերքատվությանը: Ալրացողով ախտահարված տեր-բույսերի կենսագործունեությունը խախտվում է, թուլանում է բույսի դիմադրողականությունը, և այն ընկալունակ է դառնում այլ սնկային հիվանդությունների նկատմամբ:

Նկարագրվող սնկի նկատմամբ պայքարելու համար անհրաժեշտ է ձեռնարկել կանխարգելիչ միջոցառումներ՝ ապահովել ճիշտ մշակումը, ախտահանված սերմացուի ցանքը և ցանքաշրջանառությունը:

Սունկն Արցախում տարածված տեսակ է և հայտնաբերվել է հետազոտության բոլոր տարիներին:

9. Արևածաղկի սեպտորիոզ- *Septoria helianthi* Ellis & Kellerm.

Սունկն ախտահարում է տերևները, այդ պատճառով հիվանդությունն անվանում են նաև տերևային սեպտորիոզ: Հիվանդության առաջին նշանները կարող են դիտվել շաքիլային տերևների վրա, այնուհետև վարակը տարածվում է ստորին և վերին տերևների վրա: Ախտահարված օջախների վրա առաջանում են բաց եզրագծված բծեր, որոնք սնկի զարգացման վաղ փուլում դեղին են, աստիճանաբար ստանում են մուգ դարչնագույն և գորշ գունավորում: Բծերը տեղակայվում են հիմնականում ջղերի արանքում, տերևների վերին մակերեսներին: Սնկի զարգացմանը զուգընթաց բծերի վրա ձևավորվում են պիկնիդները, որոնց վրա ձևավորվում են անգույն, ուղիղ կամ թեթև կորացած սպորները: Վարակված հյուսվածքները ենթարկվում են ներկրոզի և ճեղքավորվում պոկվում: Արդյունքում առաջանում են անկանոն ծակոտկեն տերևային մակերեսներ: Հազվադեպ հիվանդությունը կարող է արտահայտվել ցողունների և ծաղկաբույլերի վրա: Սնկի վարակի աղբյուր են համարվում վարակված տեր-բույսի մնացորդները, երբեմն նաև չախտահանված սերմացուն:

Հիվանդությունն ինտենսիվ է դրսևորվում տեր-բույսի ծաղկման փուլից հետո, սնկի տարածմանը նպաստում են տաք և խոնավ եղանակային

պայմանները: Նկարագրվող սնկի դեմ որպես պայքարի միջոցառում խորհուրդ է տրվում կիրառել ցանքաշրջանառություն և ապահովել ախտահանված սերմացուների ցանք:

Նկարագրվող սուսկն Արցախում տարածված տեսակ է, հիվանդության օջախներ հայտնաբերվել են ամենուր:

